ՀՄԱԶԳԱՅԻՆ (ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՈՒ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ) ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ

ՀՀ-ԻՑ ՀԱՅՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՄԱԶԳԱՅԻՆ (ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՈՒ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ) ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ

Մեր երկրում առկա քաոսային ու աղետալի ճգնաժամից դուրս գալու, իշխանությունը բռնազավթած խամաճիկների պետականակործան գործունեությունը կանխելու, անցած երեսուն տարիների ազգային-պետական կյանքը ինքնահոսի մատնված ու աննպատակային իներցիայից դուրս բերելու, կատարված սխալները չկրկնելու երաշխիքներ ստեղծելու, նոր որակի ու տեսակի երկիր և պետություն, ազգային համակեցական և հասարակական կյանք արարելու համար առաջարկում ենք հետևյալ անհետաձգելի, անհրաժեշտ ու պահանջված քայլերի հերթագայության ճանապարհացույց։

<u>Քայլ առաջին</u>. **Աշխարհաժողովի նախաձեռնող խումբը** հրապարակայնորեն հանդես է գալիս սույն փաստաթղթի /կամ դրա որոշ կետերի/ հանրայնացմամբ՝ առաջարկելով անհապաղ ու աներկբարեն նախաձեռնել **Ազգային Խորհրդի** ստեղծման գործընթաց, որը կհանդիսանա այս ստեղծված իրավիճակից, պետական ու ազգային աղետի վերածվող համակարգային ճգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ ու պահնջված համընդհանուր մոբիլիզացիայի ինքնակազմակերպման և ինքնակառավարման միակ լեգիտիմ կառավարման համակարգ /այսուհետ նաև՝ **ԱԽ**/։

<u>Քայլ երկրորդ</u>. **Ազգային Խորհրդի** ձևավորման /որն իր մեջ ներառելու է մի քանի մասնագիտա-կան ու այլ խորհուրդներ/ նպատակով **Աշխարհաժողովի նախաձեռնող խումբը** առաջնային դիմում է **Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցուն**՝ որպես մեր երկրում լեգալ լեգիտիմություն ունեցող միակը մնացած ինստիտուցիոնալ կառույց այս ճակատագրական ու օրհասական պահին ստանձնելու նշյալ գործընթացը և սույն ճանապարհային քարտեզի մնացյալ քայլերի կայացման առաջնորդության ու պատասխանատվության նվիրական առաքելությունը։

<u>Քայլ երրորդ</u>. **Հայոց Առաքելական Եկեղեցին,** ելենլով տիրող իրավիճակից և հասկանալով առկա օրհասական գոյաբանական վտանգներն ու սպառնալիքները, ողջունում և ընդունում է **Աշխարհաժողովի նախաձեռնող խմբի** կողմից ներկայացված հանրային այս պահանջը՝ ստանձնելով այս նվիրական պատասխանատվությունը։ Որպես իր կողմից առաջնային քայլ **Առաքելական եկեղեցին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի** օրհնությամբ ինքն է ներկայացնում **Ազգային Խորհրդի** առաջնային ու կարևորագույն խորհուրդներից մեկը՝ **Հոգևոր Խորհուրդը** /այսուհետ՝ **ՀԽ**/։ Այն կազմվելու է Հայաստանի ու Արցախի թեմերի առաջնորդներից, որոնց ընդհանուր որոշումներն ու առաջարկները ներկայացնում է այդ **Հոգևոր Խորհրդի** ներկայացուցիչը, որին ընտրելու է **ՀԽ**-ն, և որը հանդես է գալու և՛ եկեղեցու, և՛ խորհրդի անունից, որն առաջնորդելու և ղեկավարելու է ողջ **Ազգային Խորհրդի**

գործունեությունը /խորհրդատվական մակարդակով կամ արտերկրներում համազգային համընդհանուր մոբիլիզացիա կազմակերպելու, լոբբիստական ու դիվանագիտական ակտիվ գործունեություն ծավալելու և ընդհանրա-պես, համազգային մոբիլիզացիան կազմակերպելու նպատակով կարող է և անհրաժեշտ է ձևավորվել նաև **համազգային հոգևոր խորհուրդ**՝ ներառելով այդ երկրներում գործող հայ առաքելական եկեղեցու մնացյալ թեմերի առաջնորդներին կամ նրաց ներկայացուցիչներին/։

Քայլ չորրորդ. **Հոգևոր Խորհրդի** /կամ խորհուրդների՝ նկատի է առնվում **համազգային հոգևոր խորհուրդը** նույնպես/ ձևավորումից անմիջապես հետո, **ՀԽ**-ի առաջնորդը ներկայացնում է **Ազգային Խորհրդի** ձևավորման, և նրանում առաջնահերթ մյուս կարևորագույն՝ **Ռազմական Խորհրդի** կազմավորմա անհետաձգելի պահանջ /հետայսու՝ նաև **ՌԽ**/։

Քայլ հինգերորդ. **Ռազմական Խորհրդի** ձևավորման համար հրավիրվում են ներկայումս ծառայող ու պաշտոնաթող /ինչպես նաև արտերկրում ապրող մեր հայրենակից/ բոլոր այն բարձրաստիճան սպաները, ովքեր գիտակցում ու պատրաստ են պատասխանատվություն վերցնել իրենց վրա ներկա ծանրագույն իրավիճակից երկիրը դուրս բերելու նվիրական գործում։

Քայլ վեցերորդ. Այս երկու առաջնային խորհուրդների՝ **ՀԽ** և **ՌԽ** ձևավորումից և համատեղ գործունեության ազգանվեր ուխտից հետո, /որը լայն մասսաների կողմից կընկալվի՝ որպես միակ փրկօղակ ու լուսավոր կետ, անհրաժեշտ է ձևավորել մյուս խորհուրդները և անցնել **համընդհանուր ու համապարփակ մոբիլիզացիայի**՝ իր երկու մակարդակներով՝ **համապետական և համազգային մոբիլիզացիայի ծրագրերի իրականացմանը,** որոնք ներկայացվում են ստորև։

Քայլ յոթերորդ. **Ազգային Խորհրդի** ամբողջացման, լիարժեք կառավարման ու համակարգային գործունեության ապահովման համար անհրաժեշտ մյուս խորհուրդներն են՝

- **Քաղաքական Խորհուրդը** /հետայսու՝ նաև **ՔԽ**/
- **Կառավարման Խորհուրդը՝ ԿԽ,**
- **Տնտեսական Խորհուրդը՝ ՏԽ,**
- **Դիվանագիտական Խորհուրդը՝ ԴԽ,**
- **Իրավագիտական Խորհուրդը՝ ԻԽ,**
- **Տեղեկատվական-Հաղորդակցային Խորհուրդը՝ ՏՀԽ,**
- **Գիտական-Տեխնոլոգիական Խորհուրդը՝ ԳՏԽ**
- **Հոգևոր-Մշակութային Խորհուրդը՝ ՀՄԽ,**
- **Գիտական-Կրթական Խորհուրդը ԳԿԽ**
- **Հանրային-Ժողովրդական Խորհուրդը՝ ՀԺԽ,**

Անհրաժեշտության դեպքում Ազգային Խորհուրդը կհամալրվի այլ խորհուրդներով, իսկ ներկա առաջարկում դրանք հոգևոր և ռազմական առաջնային խորհուրդների հետ միասին կազ-մում են թվով **12 խորհուրդներ,** որոնք ամբողջանում են՝ որպես

Ազգային Խորհուրդ, որն էլ հանդես է գալու՝ որպես Ազգային Հայեցակարգային Իշխանություն:

Քայլ ութերորդ. Այստեղ սկսվում է ամենադժվար գործընթացը՝ խորհուրդների կազմը: Եթե եկեղեցու պարագայում շատից-քիչից հնարավոր է այն կայացնել, որովհետև այն այսօր մնա-ցած միակ ինստիտուցիոնալ կառույցն է, որն իր 1700-ամյա ավանդականությամբ ու ներքին օրենք-կանոներով կարողանում է ինքնակազմակերպվել ու ինքնակառավարվել, հետևաբար հնարավոր է նաև իր ներսում ձևավորել վերոնշյալ **Հոգևոր Խորհորդը** /անհրաժեշտության դեպքում իր երկու թևերով՝ հայաստանյան և սփյուռքյան/, ապա այլ է խնդիրը մնացած խոր-հուրդների դեպքում, որովհետև այստեղ դաշտն ավեր է ու անկազմակերպ, իսկ մարդկային ամբիցիաներն ու հավակնոտությունները անբնական են, անհանդուրժողականությունը՝ թշշ-նամական, անմիաբանությունը՝ անտրամաբանական, չհավանությունը՝ չպատճառաբանված, կասկածամտությունը՝ չհիմնավորված և այլն:

Հարցն ավելի քան տրամաբանական է՝ **ինչպե՞ս վարվել:**

1. Դրա համար էլ գործընթացը պետք է մեկնարկել հենց եկեղեցուց՝ որպես առաջնա-յին խորհուրդ, նախ՝ ոգեգաղափարապես, երկրորդ՝ աստիճանակարգությամբ ու ենթակարգությամբ, երրորդ՝ կենսունակությամբ ու կենսագործունեությամբ կայուն ու ամբողջական ինստիտուտ-համակարգի, որը հանդիսանալով կենտրոնաձիգ առանցք իր շուրջ կարող է հավաքել, ձևավորել, ներգրավել կենտրոնախույս մնացած մյուս խորհուրդները:
2. Ինչ վերաբերում է **Ռազմական Խորհրդին՝** որպես առաջինի առակայության դեպ-քում ձևավորվող երկրորդ կարևորագույն համակարգ, նույնպես դառնում է հավա-նական, **նախ՝** մինչ այս քաղաքական պատասխանատվությունից խուսափող ռազ-մական թևը, հետայսու արդեն ունի այս ամենի առաջնորդող և ուղղորդող համա-կարգաստեղծ կառավարման օղակը՝ ի դեմ **Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:** Եվ իրենից պահանջվում է մասնակցել այս ինքնակազմակերպան ու ինքնակառավար-ման, իրենց պարագայում նաև ինքնապաշտպանության գործընթացներին: **Երկ-րորդ՝** հավանական է դառնում խորհուրդի ձևավորումը այն պատճառով, որ չնայած այստեղ էլ կա մարդկային ֆակտորը, իրար սիրել-չսիրելու, հանդուրժել-չհանդուրժելու փաստը, սակայն այս ամենով հանդերձ կա որոշակի զինվորական աստիճանակարգություն, ենթակարգություն, կարգապահություն ու վարքականոն: Եվ վերջապես **երրորդ՝** իրենք խորապես պետք է գիտակցեն, որ իրենց անգործության ու անպատասխանատվության հետևանքով է, որ այս ապիկար իշխանությու-նը շարունակում է գործել ու վտանգի տակ դնել պետական ու ազգային կյանքը: Հետևաբար, պետք է ճիգ գործադրեն հաղթահարելու մարդկային

ամբիցիաներն ու վերցնեն երկրի ապագայի հանդեպ պատասխանատվություն, որի համար տվել են անձնվիրաբար ծառայելու զինվորական երդում: **Ռազմական խորհուրդն** իր մեջ անհրաժեշտության ու նպատակահարմարության դեպքում կարող է կամ պետք է ունենա **Ազգային անվտանգության ծառայության խորհուրդ և/կամ այլ մասնագիտական խորհուրդներ,** որոնք ձևավորվելու են ըստ իրենց բնագավառնե-րի պաշտոնաթող բարձրաստիճան սպաներից, ովքեր հրաժարվել են ծառայել այս իշխանությանը և նրանցից, ովքեր կհրաժարվեն ծառայել նրանց՝ իրենց ծառայությունն ու հավատարմությունը հայտնելով **Ազգային Խորհրդին՝** ծառայելով ազգին, պետականությանն ու հայրենիքին: Այս հանգամանքը կդառնա համակարգաստեղծ, որովհետև այս երկուսի առակայության պարագայում՝ առաջին՝ **հոգևոր առաջնորդության և ռազմական-ինքնապաշտպանական-անվտանգային վահանի առկայությունը** կփոխի ապակողմնորոշված, տարերայնորեն գործող, հուսալքված ու հիասթափված, անզորության համախտանիշով վարակված, իմունային զգոնությունն ու կարողությունը կորցրած հասարակությանը, որը կվերգտնի իրեն և կհամախմբվի իր վրա առաջնորդության ու ղեկավարման պատասխանատվություն վերցրած **Ազգային Խորհրդի** շուրջ: Սրա արդյունքում իշխանափոխությունը ժամերի ու տեխնիկական հարց է: Սրանից հետո սահմանին կանգնած զինվորն ու սպան կզգան, որի իրենց թիկունքն ամուր է, որ երկրի ներկայով ու ապագայով մտահոգ Տեր կա և ինքնապաշտպանություն կազմակերպելն ու հաղթանակ ապահովելը կդառնան իրատեսական ու իրագործելի՝ ներկայիս համատարած պարտվողականության ու կապիտուլացիոն տրամադրությունների փոխարեն:

3. Թերևս ամենադժվարը կա ու մնում է **Քաղաքական Խորհրդի** ձևավորումը, որովհետև քաղաքական համակարգը վարակակիր ու բացիլավորված խորագույն տենդի ու հոգևարքի մեջ է գտնվում, որի պատճառով էլ հայտնվել ենք այս իրավիճակում: Կնշանակի այն իր հիվանդագին կարգավիճակով շատ քիչ հնարավորություն ունի որևէ առողջ միավոր ձևավորել՝ քաղաքական խորհրդի տեսքով և առողջ համագործակցություն սկսել, որովհետև այստեղ բախվելու են արդեն 130 և ավելի տարիներ ձգվող մրցավազքն ու իրարուտոցին: Այս իրավիճակում **Հոգևոր Խորհրդի** կողմից կարող է առաջարկվել, թե ովքեր կարող են կամ պետք է ձևավորեն այդ քա-ղաքական խորհուրդը, որի չկայանալու դեպքում, այն ոչ ոք չի ներկայացնի: Ցավալի է, բայց նախնական փուլում, նոր ձևավորվող այս համակարգը՝ **Ազգային Խորհուրդն** էլ քաղաքական վիրուսով չվարակելու համար կարելի է դեռևս ձեռնպահ մնալ դրա արհեստածին ստեղծումից կամ քայքայիչ ներկայությունից:

4. Փոքրիշատե հեշտ է ձևավորել **Դիվանագիտական Խորհուրդը,** որը խիստ մասնա-գիտական ինստիտուտ է, որը պահանջում է համապատասխան պատրաստվածություն և արհեստավարժություն, որոնց շրջանակն այնքան էլ մեծ չէ և հնարավոր է նվիրյալ մարդկանցից, ովքեր հրաժարվել են կամ կհրաժարվեն ծառայել պարտվողական իշխանություններին ու կատարել նրանց կամայականությունները, ձևավորել այս խորհուրդը:
5. Նույն մոտեցմամբ կարելի է ձևավորել նաև **Իրավագիտական խորհուրդը,** այստեղ նույնպես կգտնվեն նվիրյալ ու չծախված անհատականություններ, ովքեր իրենց մասնագիտական և մարդկային կարողությունները կներդնեն այս խորհրդի ձևավորմանն ու սպասվող քրտնաջան ողջ աշխատանքների իրականացմանը: Վերջին երկու խորհուրդներն իրենց աշխատանքները, ինչպես նաև մոբիլիզացիոն գործընթացները առավել նպատակային ու արդյունավետ կազմակերպման համար կարող են ձևավորել **դիվանագիտական ու իրավագիտական պալատներ՝** ներգրավվելով համայն հայության այս ոլորտային ներուժը:
6. **Տնտեսագիտական խորհուրդը** ձևավորվում է հետևյալ կարևոր նախապայմաններից ու նպատակներից ելնելով՝ **նախ՝** որպես գերխնդիր՝ ռազմական իրավիճակում գտնվող երկրի համընդհանուր մոբիլիզացիայի համատեքստում անհապաղ տնտեսական մոբիլիզացիայի նախապայման-նպատակից, որպես տեղերում՝ համայն-քային մակարդակներում և հանրապետության մասշտաբով ինքնապաշտպանական միջոցառումների համար անհրաժեշտ պարենային անվտանգության ապահովումից սկսած, մինչև տնտեսական ռեսուրսների ճիշտ ու արագ, նպատակային ու արդյունավետ կազմակերպում: **Երկրորդ՝** պետական նոր տնտեսվարման ու տնտեսական հարաբերությունների ձևավորման առաջարկների և հայեցակարգերից ելնելով: Դրա համար նույնպես կարող են հրավիրվել արտերկրի մեր հայրենակիցները՝ բոլորի առաջարկները հաշվի առնելու ու ներգրավվելու համար: Տնտեսական առաջարկների, քննարկումների և դրանց արդյունքների համակարգման նպատակով **Տնտեսական Խորհուրդը** իրեն կից նույնպես կարող է ձևավորել **տնտեսագիտական պալատ**: /Վերջին երեք խորհուրդների և դրանց կից ձևավորվող պալատնե-րի ներկայացուցիչները իրենց գործունեության ընթացքում պարտավոր են, առնվազը ժամանակավորապես դադարեցնել քաղաքական որևէ կուսակցության անդամակցությունը և այս խորհուրդներում հանդես գան բացառապես մասնագիտական դիրքերից՝ բացառելով քաղաքական որևէ կուսակցության շահերը սպասարկելուց/:
7. **Կառավարման Խորհուրդը** հավաքագրվում է **Ազգային Խորհրդի** քաղաքագիտական, փորձագիտական, գաղափարական ու կառավարչական խորհրդատվությու-նը, սնուցումն ու իրազեկությունը

ապահովելու և ընդհանուր կառավարումը պրո-ֆեսիոնալ՝ արհեստավարժ ու գիտական-տեսականորեն և կիրառական-պրակտիկ՝ գործնականորեն ճիշտ ու պատշաճ, արդյունավետ ու նպատակային դարձնե-լու համար: Այն պետք է ձևավորվի Հայաստանում փոքրիշատե առկա ուղեղային կենտրոնների կամ անհատ վերլուծաբան-փորձագետների, կառավարման փորձ ու հմտություն ունեցող բարձրորակ մասնագետների ներգրավմամբ: Սակայն այստեղ ընտրությունը պետք է կատարել խիստ ընտրողաբար՝ խուսափելու համար արհեստականորեն բուծված գրանտակեր հկ-ների ու կեղծքաղաքագիտական կառույցնե-րի ու փորձագետների ներգրավվումից:

8. **Տեղեկատվական-Հաղորդակցային Խորհրդի** ձևավորումն անհրաժեշտ է արդի տե-ղեկատվական ու հաղորդակցային տեխնոլոգիական գործիքակազմերի ու մեխա-նիզմների կիրառության միջոցով էլ առավել արդյունավետ ու նպատակային դարձ-նել **ԱԽ** կառավարման գործընթացը, ինչպես նաև **Համազգային Խորհրդի** ձևավոր-ման դեպքում **համազգային համընդհանուր մոբիլիզացիայի** կազմակերպման հա-մար այս երկու խորհուրդների համագործակցությունը, փոխօգնությունը և համազ-գային ներգրավածությունն ու ներառականությունն ապահովելու նպատակով:
9. **Գիտական-Տեխնոլոգիական Խորհրդի** առկայությունն անհրաժեշտ է **ԱԽ**-ին ներ-կայացնելու և առաջարկելու այն առաջադեմ ձեռքբերումներն ու տեխնոլոգիաները, որոնց օգտագործման կամ կյանքի կոչման միջոցով հնարավոր կլինի ապահովել թե՛ ռազմական-ինքնապաշտպանական բնագավառում մեր հաջողությունները՝ կանխելով թշնամիների նախահարձակ ռազմական նկրտումները, թե՛ տնտեսու-թյան բնագավառում արագ զարգացումն ու արդյունավետությունը, թե՛ նորարա-բական առաջընթացով ու նվաճումներով բարձրացնել ազգի ոգին ու կոնսոլիդա-ցիան և ընդհանրապես, կազմակերպել պահանջվող մոբիլիզացիոն գործընթացնե-րը և այլն:
10. **Հանրային-Ժողովրդական Խորհուրդը** ձևավորվում է հանրային հեղինակություն ունեցող անբասիր անհատականություններից, որոնք կապված չեն նախկին կամ ներկա իշխանությունների հետ և չունեն նրանց քաղաքական սպասարկման մշուշոտ անցյալ: Ովքեր բացառապես աչքի են ընկել և ընկնում իրենց ազգային ու հայրենատիրական վառ արտահայտված գործունեությամբ, ունեն հոգևոր ու ոգեղեն խոր ընկալունակություն և ներգրավված չեն եղել ու չեն որևէ փողային կեղտոտ գործարքների մեջ: Նման անհատականություններին կարող է առաջարկել **Աշխար-հաժողովի նախաձեռնող խումբը** և ձևավորվող վերոնշյալ խորհուրդները՝ տալով տվյալ անձանց հանդեպ իրենց երաշխավորագրերը, ինչպես նաև կարող են առաջարկվել հանրության կողմից, բայց միևնույն է,

բոլոր դեպքերում նման անձանց թեկնածությունները վերջնականորեն հաստատում է **Հոգևոր Խորհուրդը**:

11. **Հոգևոր-Մշակութային Խորհրդի** ձևավորումը նույնպես անհրաժեշտ է այսօրվա ապաբարոյական ու հակամշակութային միջավայրում առողջ հոգևոր-մշակութա-յին կյանքի կազմակերպման, դրանց համար անհրաժեշտ հայեցակարգերի, ռազ-մավարության ու քաղաքականության մշակման համար: Վերջին հաշվով, բարե-նպաստ միջավայր կստեղծվի հոգեմտավոր գործունեության ու դերակատարության հանդեպ պարտավորություն ու պատասխանատվություն կրող նոր որակի մտավորականության ձևավորման համար, որն այօր իսպառ բացակայում է, որը տեր կկանգինի հոգեմտավոր-մշակութային ուժ-զորությանը և հանդես կգա հենց այդ իշխանության դիրքերից՝ ներկայիս կեղծմտավորականության փոխարեն:
12. **Գիտական-Կրթական Խորհրդի** ձևավորումը դարձյալ հույժ անհրաժեշտություն է այս հետանկախության երեսուն տարիների ընթացքում հետևողականորեն կազ-մաքանդած կրթական ու գիտական համակարգը մաս առ մաս հավաքելու, վերականգնելու, առողջացնելու և մի նոր նպատակային ու ապագայանվաճ տեսլականներով վերազինելու ու գործարկելու համար, առանց որի հնարավոր չէ ընդառաջ գնալ բազում փորձություններով լի այսքան խիստ անորոշ ապագային: Իսկ մեզ համար ցանկալի ապագան նվաճելու և կերտելու, ազգային պետություն կառուցե-լու համար անհրաժեշտ է այդ ապագայի տեսլական, դրան համարժեք տնտեսանյութական հզորություններ, դրանք ձեռք բերելու համար համապատասխան ապագայաթռիչք գիտություն, իսկ վերջինիս կայացման համար էլ համարժեք ապագայամետ կրթություն: Եվ այս ամենը կազմակերպելու և կյանքի կոչելու համար մեզ անհրաժեշտ է կրթագիտական նոր հայեցակարգեր ու քաղաքականություն, որը որպես առաջնային խնդիր իր առջև պետք է դնի **ԳԿԽ**-ն:

Բոլոր խորհուրդներն իրենք են ընտրում իրենց նախագահին կամ ներկայացուցիչ-ղեկավարին, ով պետք է կոորդինացնի ու համակարգի իրեն վստահված խորհուրդի աշխատանքը: Նման ներկայացուցչի ընտրության հարցի դժվարության պարագայում **Հոգևոր Խորհուրդն** ինքն է առաջարկում իր նախընտրյալ թեկնածուին տվյալ խորհրդի կազմից: Ձայների մեծամասնություն չհավաքելու դեպքում, **ՀԽ**-ն կամ ներկայացնում է նոր թեկնածու կամ, նախորդ թեկնածուին կրկնառաջադրելով, հաստատում է խորհրդի նախագահի պաշտոնին:

Ազգային Խորհրդի աշխատանքներին զուգընթաց ձևավորվում **ԱԽ-ի աշխատակազմ,** որն հընթացս համակարգում և ամբողջացնում է **Ազգային Խորհրդի** աշխատանքային կանոնակարգն ու վարքականոնները, որն **ԱԽ**-ի կողմից

հավանության արժանանալու դեպքում հաստատվում և դառնում է աշխատանքային ուղեցույց ու պրոտոկոլ։

Ազգային Խորհուրդը իր կառավարումն իրականացնում է բացառապես **Ազգային Խորհրդի** կողմից ընդունված **դեկրետներով, որոնք պարտադիր են բոլորի համար ու իրականացման**։

Քայլ իններորդ. Այս ամենով հանդերձ, ինչպե՞ս հասնել իշխանափոխության։ Վերոնշյալ քայլերի ամբողջական կամ մասնակի իրականացումից հետո, /որոնցից առաջին երկու խորհուրդ-ների ձևավորումը առաջնային ու պարտադիր է/ բռնազավթած իշխանափոխությունը հնարավոր է հանձնել ազգային կառավարման և փրկել իրավիճակն առնվազն մի քանի ճանապարներով՝

ա/ ռազմական հեղաշրջմամբ։ Երբ արդեն կա ռազմական խորհուրդ, որի մեջ ներգրավված են բարձրաստիճան արհեստավարժ ու մեծ վաստակ ունեցող սպաներ, ովքեր հանձն են առել իրենց վրա կրել պատասխանատվություն երկիրն այս ծայր վատթարագույն վիճակից դուրս բերելու համար, ապա և՛ հանրության ահռելի մեծամասնությունը ի պաշտպանություն կկանգ-նի նրանց թիկունքին, և՛ ուժային կառույցների իրենց պաշտոնակիցների՝ զինվորական, ոստի-կանական, ազգային անվտանգության ծառայողների զգալի ու որակական, հեղինակավոր ու ազդեցիկ, նշանակալի ու վճռորոշ մի զնագված նույնպես ի պաշտպանություն կանցնի նրանց կողմը։ Այս պարագայում կարող ենք փաստել, որ բռնազավթած իշխանությունն ազատագրված է և **Հոգևոր-Ռազմական-Քաղաքական** իշխանադարձությունը կայացած, մնում է կազմակեր-պել **ազգային ազատագրական պայքարի** մյուս դրսևորումները՝ հատկապես արտաքին թշնամիների նկատմամբ, իսկ ներսում՝ հինգերորդ շարասյան դեմ։ /**Ազգային Ազատագրական Պայքարի** բազմաճյուղ գործընթացի ուղեցույցը կներկայացվի առանձին ձեռնարկով/։

բ/ այս առաջնային քայլերի կայացման դեպքում բանակցություններ են վարվում քաղաքա-կան դաշտի այն ուժերի հետ, ովքեր փորձել են վերջին երկու տարիների ընթացքում գեներաց-նել համաժողովրդական ընդվզումներ ներկա կապիտուլյանտ ինքնակոչ իշխանազավթների դեմ՝ պայմանով, որ նրանք հաշվի առնելով իրենց անհաջողությունների բուն ու խորքային պատճառները, որոնք հիմնականաում մեկ բառով բնութագրվում են՝ **նախկիններ,** հրաժարվում են, կամ դուրս են գալիս, կամ զիջում են, կամ աջակցում ու զորակցում են, կամ առնվազն չեն խանգարում **Ազգային Խորհրդի** ձևավորմանն ու հետագա քայլերի կայացմանը, այդ թվում և հատկապես, համաժողովրդական նոր ու նվիրական, ազգային ու հայրենատիրական ազա-տագրական պայքարի խմորմանը՝ ներքին ու արտաքին թշնամիների դեմ, որի կազմակերպ-ման, զարգացման արդյունքում հնարավորություն կառաջանա ստեղծելու համաժողովրդական մեծ ընդվզում և կայացնել իշխանափոխություն ՝ ապիկար իշխանագող կապիտույլանտ-ներին հեռացնելով կառավարման ղեկից։

գ/ կամ իշխանափոխության վերոշարադրյալ երկու կետերի կայացման անհնարինության դեպքում, վաղ թե ուշ աշխատելու է մեկ այլ հավանական

տարբերակ. հայաստանյան ներկա վիճակն այնքան ծանր է, որ դժվար չէ կանխատեսել թե թշնամու հերթական նախահարձակ պատերազմը, երբ և որ կողմից կամ կողմերից կմեկնարկի, որը դարձյալ համաժողովրդական ընդվզման ալիք կբարձրացնի: Սակայն այս անգամ էլ ապակողմնորոշված ու մոլորված հանրույթը առաջնորդ չունենալու պատճառով կրավորական ամբոխի չի վերածվի և իր արդարացի զայրույթն ու բողոքը տարերային ու քաոտիկ դրսևորումներով չի պարպի, այլ նպատակային ու կառավարելի ձևով կուղղորդի կապիտուլյացիոն իշխանությունների հեռացմանն ու ազգային ազատագրական ու ինքնապաշտպանական համակարգերի ու գործընթացների կազմակերպմանը, որը միակ հնարավոր տարբերակն է այս վիճակից պարտված ու անպատիվ, ջախջախված ու ընկճված, կոտրված ու կորուստներով դուրս չգալու համար:

դ/ Ազգային Խորհրդի ակտիվ ու կենսունակ գործունեության դեպքում, անգամ մինչև իշխա-նափոխությունը, մինչև տիտղոսային իշխանության ձեռք բերումը, ինքն է դառնում փաստացի իշխանությունն ու կառավարման կրիտիկական ենթակառուցվածքը տեղերում՝ համայնքներում և ազգաբնակչության հետ արդյունավետ ինքնակազմակերպման, ինքնակառավարման ու ինքնապաշտպանական միջոցառումներ, տեղեկատվական-իրազեկման աշխատանքներ իրականացնելով և ազգային գաղափարական ու հայրենատիրական ոգի հաղորդելով և այլն: Սրանից հետո Տիտղոսային իշխանություն վերցնելը ժամանակի ու տեխնիկայի հարց է, որովհետև այդ ժամանակ է, որ փողոցում գցված իշխանությանը տեր լինող կլինի, այն էլ արժանա-վոր Տեր, ով կձևավորի **ազգային իշխանություն հանուն Ազգային պետության,** բայց այս ամենը վերը նշված քայլերի հաջորդականությամբ և ուղեցուցային հետևողականությամբ իրագործման և **Ազգային Խորհրդի** ձևավորման արդյունքում:

ե/ մեկ այլ տարբերակի դեպքում, կարելի է համաժողովրդական ընդվզման ալիքը կազմակերպել քաղաքական այլ միավորի միջոցով, այս վերոնշյալ գործընթացներին զուգահեռ, կամ անգամ մինչև սրանց մասին բարձրաձայնելն ու հանրայնացնելը, սակայն միասնական համա-գործակցային ու նպատակային փախպայմանավորվածությունների արդյունքում: Եվ երբ այդ բողոքի ու դժգոհության ալիքը կստանա անհրաժեշտ կրիտիկական մասսա ու զանգված, այդ դեպքում արդեն որոշակիորեն ձևավորված այս խորհուրդը հանդես կգա՝ որպես անհրաժեշտ համակարգման ու կոորդինացման ղեկավար օղակ և առաջ կտանի իշխանափոխության հա-մար անհրաժեշտ քայլերը՝ ճիշտ ու նպատակային ուղղորդելով լայն զանգվածների գործողությունները:

զ/ հնարավոր են նաև այլ տարբերակներ, սակայն դրանք ավելի ակնառու կլինեն վերոնշյալ գործընթացի մեկնարկման ու զարգացման ընթացքում՝ ըստ հանգամանքների ու իրավիճակի, դրանցում արագ կողմնորոշմամբ ու համապատասխան քայլերի իրականացմամբ: Բայց եթե ոչ մի գործընթաց չես մեկնարկել, հետևաբար, որևէ արդյունք ակնկալելն էլ անիմաստ է ու կրավորական

սպասում: Իսկ այսօր առավել քան երբևէ, մեզանից պահանջվում է ակտիվ ու նպատակային քայլեր և գործընթացներ: Թերևս մինչ այս, ավելի հանգամանալից ու ճանապարհային ուղեցույցով, քայլերի տրամաբանված, նպատակային ու պատճառաբանված առաջարկ և գործընթաց ոչ առաջարկվել էր, հետևաբար, ոչ էլ գործարկվել:

Այս ամենը ինչ ներկայացվեց դեռ առաջին քայլն է, որի հաջողությունը մեծապես կախված է հաջորդ համակարգային ու արդյունավետ աշխատանքից, որը պետք է դրսևորվի՝ որպես **Համապետական ու Համազգային Համընդգրկուն ու Համապարփակ Մոբիլիզացիա:**

Նախ մոբիլիզացիան ներկայացնենք՝

- **ըստ մակարդակների**
- **ըստ բազմաշերտության**
- **ըստ մասշտաբների**

Մոբիլիզացիան ըստ մակարդակների բաժանվում է երկու կամ երեք հարթությունների՝

ա/ համաժողովրդական համընդհանուր մոբիլիզացիա

բ/ համապետական համընդհանուր մոբիլիզացիա

գ/ համազգային համընդհանուր մոբիլիզացիա

Ինչու՞ է այստեղ նշված **երկու կամ երեք,** որովհետև **համաժողովրդական և համապետական մոբիլիզացիաները** պետք է դիտարկել որպես մեկ ամբողջական **համաժողովրդական-համա-պետական** գործընթաց, սակայն ներկա հանգամանքների առկայության պարագայում ստացվում է, որ դրանք կարող են գործել կամ անջատ, կամ նույնիսկ առանց երկրորդի առկայության, որոնց պատճառները կներկայացվեն ստորև:

Նման լայնամասշտաբ և մեծածավալ մոբիլիզացիայի բազմաշերտությունը դրսևորվում է հետևյալ մակարդակներով՝

1. **Կառավարման մոբիլիզացիա**
2. **Ռազմական մոբիլիզացիա**
3. **Տնտեսական մոբիլիզացիա**
4. **Ոգեղեն-գաղափարական մոբիլիզացիա**
5. **Տեղեկատվական-հաղորդակցային մոբիլիզացիա**
6. **Քաղաքական մոբիլիզացիա**
7. **Դիվանագիտական մոբիլիզացիա**
8. **Իրավագիտական մոբիլիզացիա**
9. **Գիտական-տեխնոլոգիական մոբիլիզացիա**
10. **Գիտական-կրթական մոբիլիզացիա**
11. **Հոգևոր-մշակութային մոբիլիզացիա**

12. Սոցիալ-հասարակական մոբիլիզացիա

- և այլն

Իսկ նման **երկմակարդակ կամ եռամակարդակ ու բազմաշերտ մոբիլիզացիան** համակարգ-վում ու ամբողջանում է՝ որպես **համընդհանուր ու համապարփակ մոբիլիզացիա,** քանզի իր մեջ ներառում է, ուղղված է հասարակության, ժողովրդի, պետության, ազգի ներկայիս ռեսուրսներին, կարողություններին, հնարավորություններին և դրանց մեկ ամբողջական համա-հավաք ու ազգահավաք ուժ-զորության վերաճեցնելու նպատակային և կենսական գործընթացին:

Դրա համար էլ մոբիլիզացիոն ողջ գործընթացը նպատակադրվում, բնութագրվում ու ձևակերպվում է՝ որպես **Համապետական ու Համազգային Համընդգրկուն ու Համապարփակ Մոբի-լիզացիա**:

Հասկանալի է, որ արտաքին վտանգի, սպառնալիքի առկայության պայմաններում ամենա-առաջնային խնդիրը մնում է երկրի ու ազգաբնակչության անվտանգության հիմնահարցը, որը կարող է չեզոքացվել միայն համարժեք ռազմական մոբիլիզացիայի արդյունքում: Իսկ նման մեծածավալ մոբիլիզացիայի համար անհրաժեշտ են տնտեսական ռեսուրսներ, պետական լծակներ, կառավարման մեխանիզմներ, միջոցներ և կառույցներ: Սակայն մեր պարագայում, երբ երկրում առկա է քաղաքական քաոս, տիրում է համաժողովրդական անհամաձայնություն ու անհանդուրժողականություն, չի գործում ողջ պետական ապարատը, այդ թվում պարալիզացվել է զինված ուժերի համակարգը, ապա առաջանում է պարզունակ հարցադրում՝ **ինչպե՞ս կազմակերպել այս ամենը:** Հետևաբար, պետական ապարատի կազմաբանդման ու անգործու-թյան պայմաններում, թե՛ ռազմական մոբիլիզացիայի, թե՛ դրա համար անհրաժեշտ տնտեսա-կան մոբիլիզացիայի համար, առաջնահերթության կարգով անհրաժեշտ է կառավարման մոբիլիզացիա: Իսկ պետական համակարգի բացակայության և նման սուղ միջոցների պայմաննե-րում կառավարման մոբիլիզացիա հնարավոր է միայն ինքնակազմակերպման և ինքնակառա-վարման և դրանց արդյունքում նոր մեխանիզմների ու կառույցների ստեղծմամբ, որը ինչպես ներկայացրեցինք վերոշարադրյալում՝ հանդիսանում է **Ազգային Խորհուրդը**՝ որպես **ռազմավարական պատմական սուբյեկտ,** որն ընդունակ է տվյալ պատմական պահին վերցնել պատասխանատվություն, կայացնել որոշումներ, դրսևորել կամք ու վճռականություն այդ որոշումները կյանքի կոչելու և դրանք իրենց տրամաբանական ու մեզ ցանկալի արդյունքներին հասցնելու համար: Սա այն **Ռազմավարական Սուբյեկտն է,** ով ներկայանալու ու հանդես է գալու Հայաստան երկրի, պետականության ու ազգաբնակչության անունից տարբեր երկրնե-րում ու ատյաններում, ղեկավարելու ու առաջնորդելու մեր պետականությունն ու ազգաբնակչությանն այս օրհասական պահին, մինչև կձևավորվեն ու կամբողջանան նոր **Ազգային Պետու-թյան** անխափան կենսագործման համար անհրաժեշտ ազգային կառավարման մյուս համա-կարգերը:

Համապետական ու Համազգային Համընդգրկուն ու Համապարփակ Մոբիլիզացիայի առաջ-նային քայլերը.

Համաժողովրդական-Համապետական համընդհանուր մոբիլիզացիա՝

1/ Կառավարման մոբիլիզացիա.

Վերոշարադրյալում արդեն նշեցինք, որ պատերազմական այս ծանր վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է համընդհանուր ու համապարփակ մոբիլիզացիա՝ իր մի քանի մակարդակներով: Առավել ևս, ռազմական-ինքնապաշտպանական խնդիրները լուծելու, երկրի, պետականության ու ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու համար առաջնահերթ անհրաժեշտ է **ռազմական մոբիլիզացիան,** սրա նյութական ու ֆինանսական օժանդակության համար՝ **տնտեսական մոբիլիզացիան** և այլն: Սակայն այս ամենը կազմակերպելու համար ա-մենաառաջնայինը մնում է սրանց ինքնակազմակերպման ու ինքնակառավարման ենթակառուցվածքի ձևավորման, այսինքն՝ **քաղաքական-կառավարման մոբիլիզացիան,** որը ոչ մի կերպ ներկա պայմաններում ու ստեղծված իրավիճակում չի կայանում: Եվ վերջին երկու տա-րիների բազում ձախողված փորձերը դա են ապացուցում, որոնք ունեին իրենց հիմնարար պատճառները, որոնցից ամենագլխավորն այն էր ու է, որ այդ քաղաքական գործընթացները փորձում էին ու են կազմակերպել այն ուժերը, պայմանականորեն, ընդունված տարբերակով նրանց կոչենք նախկիններ, որոնց ժողովուրդն ինքն էր հեռացրել 2018թ-ի համաժողովրդական ընդվզման արդյունքում: Հետևաբար, այդ ժողովրդի համար նրանց նորից վերադարձնել իշխանության, դառնում է **ինքնամերժման** դրսևորում, որին ժողովուրդը չի գնում և պետք էլ չէ, որ գնա: Հետևաբար, միակ ելքը մնում հին ալգորիթմներից դուրս՝ **նախկիններ-ներկաներ, հներ-նորեր, սևեր-սպիտակներ, թալանչիներ-դավաճաններ և այլն,** կայացնել մի նոր ֆորմատի՝ ձևաչափի **քաղաքական մոբիլիզացիա՝** ձևավորելով նոր քաղաքական կառույց, որը **Ազգային Խորհուրդն է՝** կազմված իր մասնագիտական ու հանրային խորհուրդներով, որոնց ենթակայու-թյամբ էլ կձևավորվեն համապատասխան մասնագիտական պալատներ, վարչություններ ու հանձնախմբեր՝ **ԱԽ** աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար: Այս իմաստով կարող ենք ասել, որ **ԱԽ**-ն այս պահին հանդիսանալու է՝ որպես **հակաճգնաժամային կառավարու-թյուն,** որն իր գործենությանն ու կայացմանը համընթաց ձևավորելու է կառավարման ու տըն-տեսվարման ազգային համակարգեր՝ ապահովելու համար **Հայաստանի Հանրապետությունից անցումը Հայոց Ազգային Պետության: Ազգային կառավարման ու տնտեսվարման համակար-գերից են լինելու՝ Աշխարհաժողովային կառավարման և ազգային սեփականության հիմքով Հիմնադրամային տնտեսվարման մոդելները, որոնց հիմքի վրա էլ հնարավոր կլինի կայացնել նոր որակի ու կարգի**

Ազգային Պետություն: Այս ամենով հանդերձ՝ **Ազգային Խորհուրդը** ներկա բախտորոշ ու ճակատագրական պատմական պահին հանդես է գալու, ինչպես նշել ենք՝ որպես **Ռազմավարական Պատմական Սուբյեկտ**: Հետևաբար, **Ազգային Խորհուրդը** այլընտրանք չունի, դրա ձևավորման ու կայացման հետաձգումը կարող է ճակատագրական սխալ ու բաց-թողում լինել մեր երկրի ու ազգի համար, որի կայացումը հետագայում կարող է դառնալ կամ չափից ավելի բարդ, կամ գուցե նաև անհնարին:

2/ Ռազմական մոբիլիզացիա.

Այս պահին, երբ մեր տարածաշրջանի մեծ ու փոքր պետությունները պատրաստվում են պա-տերազմի այն էլ հատկապես Հայաստանի Հանրապետության տարածքում, վկա մեր երկրի սահմաններին հարևան երկրների կուտակող սպառազինությունները, զորաշարժերն ու զորավարժանքները, երբ Ադրբեջանը այս անգամ սկսում է նախահարձակ ռազմական գործողու-թյուններ մեր Հանրապետության ոչ թե սահմանին, այլ արդեն տարածքում, երբ նրանց կողմից ամեն օր հնչում են սպառնալիքներ, փաստացի ու անթաքույց հավակնոտություններ մեր երկրի ու նրա ինքնիշխան տարածքների նկատմամբ, իսկ այս ամենի համապատկերին մենք շարունակում ենք բարբաջել ինչ-որ պատրանքածին խաղաղության դարաշրջանի մասին, նշա-նակում է մենք մեզ ինքնազրկում ենք պետական դիմադրողականության վերջին հնարավու-թյունից: Պետական ապարատի անտարբերության ու անգործության կամ դիտավորյալ բոյկոտի ու հանցավոր դավադրության պայմաններում ռազմական մոբիլիզացիան չվերաճելով հա-մապետական մակարդակի՝ մնում է համաժողովրդական հարթության վրա՝ որպես ներքին համաժողովրդական ինքնապաշտպանական մոբիլիզացիա: /Ահա թե ինչու է վերևում հատուկ շեշտված մոբիլիզացիայի երկու կամ երեք հարթություններ լինելու հանգամանքը և, որտեղ է գտնվում համաժողովրդական-համապետական մեկ ամբողջական մոբիլիզացիայի բացակա-յության խորքային բուն պատճառը/: Իսկ արդեն միայն համաժողովրդական ինքնապաշտպա-նական մոբիլիզացիան արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է, որ այդ ինքնակազմակերպման, ինքնակառավարման ու ինքնապաշտպանության հույժ կարևոր ու խիստ մասնա-գիտական խնդիրն իրենց վրա վերցնեն առաջին հերթին ու հատկապես ռազմական գործին քաջածանոթ արհեստավարժ մարդիկ:

Դրա համար էլ անգնահատելիորեն կարևորված է **Ազգային Խորհրդի** կազմում **Ռազմական Խորհրդի** անհապաղ ձևավորումն ու ներգրավվածությունը համընդհանուր այս ազգանպաստ ու հայրենանվեր գործում: **ՌԽ**-ի ձևավորումը հնարավոր է հայրենիքի ու պետականության, ազգի ու իրենց խղճի առաջ երդում տված այն բարձրաստիճան սպաների, ինչպես նաև արտերկրում ապրող փորձառու մեր հայրենակիցների ներգրավվածությամբ, ովքեր պատրաստ կլինեն այս դժվարին պահին վերցնել պատասխանատվություն և տալ հավատարմության երդում աներկբա

ու հավատարմորեն ծառայելու հայրենիքին, երկրին, պետականությանն ու ազ-գին՝ չենթարկվելով ու հրաժարվելով ծառայել երկրի ներկան ու ապագան վտանգող իշխանազավթ բախտախնդիր այս խամաճիկներին:

Հասկանալի է, որ նախքան իշխանագող կապիտույլանտներից իշխանությունը վերադարձ-նելը և պետականորեն համընդհանուր, այդ թվում և ռազմական մոբիլիզացիա կազմակերպե-լը, **ՌԽ**-ն պետք է գործի առնվազան հետևյալ ուղղություններով՝

Ռազմական-քաղաքական՝

ա/ ձևավորելով **ՌԽ**՝ դրա շուրջ համախմբել ծառայող ու պաշտոնաթող սպաների ու զինվո-րականների ուժային տարբեր ոլորտներից՝ ռազմական, ոստիկանական և Ազգային Անվտանգության:

բ/ սրանով հասարակության լայն շրջանակների ու ազգաբնակչության համար դառնալ ինք-նավստահության ու ինքնահարգանքի, ինքնասիրության ու արժանապատվության վերա-կանգնման, ոգեղենության ու ուժականության տրամադրությունների ներշնչման, հայրենասի-րության ու հայրենատիրության ոգու բարձրացման ու ոգևորության խթան, պատվար ու գրա-վական:

գ/ սրանցով հանդերձ՝ վերականգնելով սեփական հեղինակությունն ու պատիվը՝ ձեռք բերել ու ստանալ համաժողովրդական համակրանքի ու համաձայնության, վստահության ու օժանդակության լեգիտիմություն՝ ազատ գործելու, այդ թվում, անհրաժեշտ ու պահանջված ռազմական իշխանադարձությունն իրականացնելու համար: **Երբ խոսվում է ներկայիս իշխանագող ու իշխանազավթ ինքնակոչ կապիտույլանտ խամաճիկներից իշխանությունը վերադարձնելու մա-սին, ապա նկատի չի առնվում այն վերադարձնել, այսպես կոչված, Նախկիններին, կամ նրանց սպասարկող արհեստականորեն բուծված կամ մինչ այդ գործող որևէ քաղաքական ուժի կամ անձի: Այլ բացառապես նկատի է առնվում, որ իշխանությունը պատկանում է, անգամ ոչ թե ժողովրդին, այլև ազգին, հետևաբար, իշխանությունը պետք է վերադարձվի ազգին և նրա անունից հանդես եկող և նրան ներկայացնող ազգային հայեցակարգային իշխանությանը, տվյալ պարագայում նոր ձևավորվող ազգային կառավարման համակարգին, ռազմավարա-կան պատմական պատասխանատու սուբյեկտին՝ Ազգային Խորհրդին:** /Սրա մասին նույնպես կխոսվի ու կներկայացվի առանձին համակարգային ու հայեցակարգային ձեռնարկով/:

Ռազմական-ինքնապաշտպանական՝

ա/ տեղերում՝ համայնքներում ինքնապաշտպանական միջոցառումների՝ կամավորական ջոկատներ, աշխարհազորային խմբեր, պաշտպանական հենակետեր, պարենային ապահով-վածության խնդիրներ, տրանսպորտային միջոցներ, կապի ու հաղորդակցության ապահովման սարքեր, ռազմական սարքավորումներ, այլ անհրաժեշտ գույքի ձեռք բերման, արտադրու-թյան,

տեղափոխման և այլ գործողությունների ու աշխատանքների կազմակերպում՝ այս պա-հին հանդիսանալով **Ռազմադաշտային Շտաբ**։

բ/ այսօր առակա ու գործող ռազմամարզական ու ռազմահայրենասիրական շրջանակների հետ համատեղ շարունակել ու կազմակերպել ազգաբնակչության լայն շրջանակների մոտ ռազմահայերնասիրական դաստիարակությունը, ռազմագիտական գիտելիքների ու հմտությունների փոխանցումը, զորավարժանքների կազմակերպումը, նրանցով մարտունակ խմբերի ձևավորումը՝ համակարգելով ու կոորդինացնելով այս ակումբների գործունեությունը՝ բարձրացնելով այս ամենի արդյունավետությունն ու նպատակայնությունը։

գ/ Աստված մի արասցե, բայց հարկ եղած դեպքում ազգաբնակչության անվտանգ ու ապահով տարհանման, ապաստարաններով ու կացարաններով ապահովման, սննդի ու առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման, ինչպես նաև առաջնային բուժ օգնություն ցուցաբերելու նախապատրաստական աշխատանքների կազմակերպում։

դ/ վերը նշված և նման այլ միջոցառումները, որոնք ռազմագետ արհեստավարժ բարձրաստիճան սպայական կազմը, որպես Ռազմադաշտային Շտաբ, շատ ավելի լավ կարող է պատկերացնել, շարադրել ու կազմակերպել, պարտավոր է ու անհրաժեշտ իրականացնել օր անգամ չկորցնելով՝ այս ողջ գործընթացներին զուգընթաց, մինչև հնարավոր իշխանափոխություն։

ե/ իշխանափոխություն, որից հետո միայն ռազմական մոբիլիզացիան համաժողովրդական մակարդակից կվերաճի նաև համապետականի՝ պահանջված գործողություններն ու միջոցառումները իրականացնելով պետական ռեսուրսներով ու լծակներով, կազմակերպվածությամբ ու մասշտաբայնությամբ։ Սակայն մինչ այդ պարտավոր ենք ռազմական-ինքնապաշտպանական մոբիլիզացիան իրականացնել համաժողովրդական մակարդակով։

Ռազմական մոբիլիզացիայի մյուս կարևոր ուղղությունը կամ մակարդակը հանրապետու-թյան սահմաններից դուրս դրա հնարավոր կազմակերպումն է՝ ներգրավվելով արտերկրյա մեր հայրենակիցներին՝ իրականացնելով որպես.

Ռազմական-համազգային՝

ա/ արտերկրներում բնակվող մեր հայրենակիցներին մեր բոլորիս բնօրրան-հայրենիքի ինքնապաշտպանական գործողություններին մասնակից դարձնելը

բ/ անհրաժեշտ ռազմագույքի ու տարբեր պարագաների, բժշկական առաջնային օգնության սարքսարքավորումների ու դեղամիջոցների բացը լրացնելու օժանդակության ու դրանց տեղափոխության կազմակերպումը

գ/ Ռազմական Խորհրդի կամ **ԱԽ**-ի կազմում գործող **Տեղեկատվության-Հաղորդակցության Խորհրդի** հետ համակարգված ու համագործակցված, թիրախավորված ու նպատակային, ար-դյունավետ ու արագ լրատվական ու տեղեկատվական, քարոզչական ու հաղորդակցային լայնածավալ աշխատանքների կազմակերպումը

դ/ տեղերում՝ իրենց բնակության երկրներում այս և այլ գործողությունները կազմակերպելու, համակարգելու, օպերատիվ ու արդյունվետ դարձնելու համար, ստեղծել կոորդինացիոն շը-տաբներ, հնարավորության դեպքում ռազմահայրենասիրական ու ռազմամարզական ակումբ-ներ և ուսուցումներ, վարժանքներ՝ կամավորականների հավաքագրման, նրանց պատրաստ-վածության մակարդակի բարձրացման և հայրենիք տեղափոխման համար, ինչպես նաև թշնա-մու անկանխատեսելի գործողություններին իրենց երկրներում ինքնապաշտպանվելու և նա-խահարձակ գործողություններին համապատասխան արձագանքելու և պատասխան տալու նպատակով:

ե/ մեր տարածաշրջանում նման կամավորական խմբերի հավաքագրման ու պատրաստման աշխատանքներին զուգահեռ, այլ առկա օտարազգի խմբավորումների հետ համագործակցության աշխատանքների իրականացում՝ միասնական ճակատով թշնամուն մարտավարական հարվածներ հասցնելու նպատակով:

զ/ մեր հաջողության ու հաղթանակի մեջ շահագրգիռ կամ մեր թշնամու/ների հանդեպ մրցակ-ցային կամ ոչ բարիդրացիական տրամադրված ժողովուրդների, պետությունների նրանց իշ-խանությունների հետ ակտիվ աշխատանքների իրականացում՝ զենք-զինամթերքի ձեռք բեր-ման, տեղափոխման, վերջիներիս կողմից թշնամու հանդեպ հավանական ռազմական գործո-ղությունների կիրառման դեպքում հնարավոր աջակցության իրականացում:

Է/ և այլ միջոցառումներ, որոնք այս փաստաթղթում նպատակահարմար չէ ներկայացնել կամ կարող է կազմվել **Ռազմական Խորհրդի** աշխատանքների ընթացքում և իրավիճակի թելա-դրանքով ու դրան համապատասխան:

3/ <u>Տնտեսական մոբիլիզացիա</u>.

Թերևս այս երկու առաջնային գործընթացների՝ **քաղաքական ու ռազմական մոբիլիզացիայի** արդյունավետության համար անհրաժեշտ է սրանց ֆինանսատնտեսական ապահովության բազան, այսինքն՝ **տնտեսական մոբիլիզացիան:** Հասկանալի է, որ եթե այս ամենն իրականաց-վեր պետական մեքենայի ողջ հզորությամբ, ապա հնարավորություններն ու պատկերը, հե-տևաբար, և արդյունքները այլ կլինեին: Սակայն մինչ պետական իշխանական համակարգի ազատագրումն ու վերադարձը, **ԱԽ**-ն տնտեսական մոբիլիզացիան ստիպված պետք է իրակա-նացնի **համաժողովրդական-համազգային** ռեսուրսների ներգրավվման ու համակարգման մի-ջոցով:

Այս առումով էլ ռեսուրսների հավաքագրումն ու կազմակերպումը նույնպես պետք է ընթանա երկու մակարդակներում՝

- **համաժողովրդական՝ ներհայաստանյան շրջանակում**
- **համազգային՝ աշխարհասփյուռ հայության համընդգրկումով**

Համաժողովրդական-ներհայաստանյան.

ա/ տնտեսական ռեսուրս ասելով պետք է հասկանանք ոչ միայն ֆինանսական ակտիվներ, այլ բոլոր տեսակի նյութական, ապրանքային, սննդամթերքի, սարքավորումների, շենք-շինու-թյունների, տրանսպորտային միջոցների, վառելանյութերի և այլնի ողջ հնարավոր բազան ու կարողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն համաժողովրդական ինքնապաշտպանության կազմակերպման համար։

Սակայն որտեղի՞ց հայթհայթել այս միջոցները։

Թե՛ ապրիլյան քառօրյա, թե՛ Արցախյան 44 օրյա, թե՛ նույնիսկ այս վերջին սեպտեմբերյան պատերազմական իրադարձությունները ցույց տվեցին, որ մեր ժողովուրդը և՛ Հայաստանում, և՛ արտերկրում, ունի բարձր կազմակերպվածության ու ինքնակառավարման ներքին պոտեն-ցիալ, իր երկրին ու հայրենիքին ծառայելու անասելի պատրաստակամություն ու նվիրվածու-թյուն և ժամերի ընթացքում կարողանում է, ասես հոսաքգծի արդյունավետությամբ ու մեղվի ժրաջանությամբ և ճշգրտությամբ, առանց պետական կառավարման լծակների ու միջոցների, օգնության ու օժանդակության, կենտրոնացված ղեկավարման ու ուղղորդման, զուտ հայրենա-նվիրական նախաձեռնողականությամբ աշխարհով մեկ ինքակազմակերպվել, ամբողջակա-նանալ և գործել որպես մեկ հավաքական նպատակային կենսահամակարգ։ **Ազգային Խոր-հրդի,** առավել ևս նրանում գործող **Տնտեսական Խորհրդի՝** իր համապատասխան ստորաբա-ժանումներով՝ տնտեսագիտական պալատ, հանձնախումբ կամ վարչություն և այլն, խնդիրն է այս ամենն ավելի համակարգված, կենտրոնացված, նպատակային ու արդյունավետ կազմա-կերպել, ուղղորդել, գույքագրել, հավաքագրել, ցուցակագրել, հաշվառել, տեղափոխել, տեսա-կավորել, պահեստավորել, պահպանել վերաբաշխել ու մատակարարել։

Այս ամենն իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ քայլերը.

- Ամենից առաջ ու ամենից վեր այս գործընթացը մեկնարկելու համար պետք է լինի բոլորի համար բացարձակ մի կարգախոս, կանոն ու նաև օրենք.
  «Ամեն ոք ու ամեն ինչ հանուն բանակի ու ռազմաճակատի, հանուն հայրենիքի ու պետության, հանուն ազգի ու Աստծո»
- Այս կարգախոսի ներքո պետք է կազմակերպվի մոբիլիզացիոն բոլոր գործընթացնե-րը, այդ թվում և տնտեսականը, որի առաջնային քայլերից մեկը այդ **ՏԽ**-ի և նրա կազ-մում անհրաժեշտ ստորաբաժանում/ների ձևավորումն է, որն ավելի նպատակային ու գրագետ կկազմակերպի ու կուղղորդի ողջ գործընթացը՝ սկսած անհրաժեշտ ու պահանջված ապրանքատեսակների ու դրանց քանակների ցուցակների պատվեր-պահանջագրերի կազմումից մինչև դրանց հավաքագրում ու վերջնական հասցեա-կան մատակարարում։
- Հնարավորության դեպքում հանրապետությունում նյութատնտեսական ռեսուրսնե-րի ու կարողությունների հաշվառում, գույքագրում,

արտադրական հզորությունների գնահատում և դրանց աշխարհատնտեսական քարտեզագրում:

- Անհրաժեշտ ապրանքների ընդունման, հաշվառման, տեսակավորման մոբիլ շտաբ-ների ձևավորում՝ քաղաքացիական-կամավորական անձանց ներգրավմամբ: Նման ընդունման կետ-շտաբները բացվելու են հանրապետության բոլոր մարզերում ու շրջաններում, բայց հասկանալի է, որ հիմնական կետերը պետք է տեղեկայված լի-նեն քաղաքամայր Երևանում: Նման շտաբները պետք է բաժանվեն ըստ ապրանքա-տեսակների՝ սննդային, առաջին անհրաժեշտության ապրանքների, զինվորական պարագաների ու սարք-սարքավորումների, բուժօգնության պարագաների, տրանս-պորտային միջոցների, տեխնիկական ապրանքների և այլն, որոնք հիմնականում ընդունելու են քաղաքացիների անձնական օգնությունները և մատակարարումները:
- Պարենային անվտանգությունն ու փոքրիշատե ինքնաբավությունն ապահովելու համար գյուղատնտեսական մթերքներ և դրանց վերամշակումից ապրանքներ ար-տադողներից մթերումների կազմակերպում, տեղափոխում, պահեստավորում, վե-րաբաշխում, մատակարարում:
- Ներկրվող սննդամթերքների հավաքագրում այն ներմուծող կազմակերպություննե-րից,
- Առաջին անհրաժեշտության ապրանքների, հիգիենայի պարագաների ընդունում ներմուծող կազմակերպություններից,
- Բուժօգնության պարագաների և դեղ-դեղորայքի ընդունում ներկրող և արտադրող ընկերություններից: Այս վերջին երեք տեսակի կազմակերպությունների հետ անմի-ջականորեն աշխատելու է **ԱԽ**-ի կողմից լիազորված ու նրա անունից հանդես եկող հանձնախումբն ու նրա ներկայացուցիչ/ները, որոնք էլ պահանջվող-ակնկալվող ապրանքները, դրանց տեսակներն ու քանակները ներկայացնելու են տվյալ կազ-մակերպություններին: Վերջիններիս կողմից ապրանքների մատակարարումը լինե-լու է պարտադիր-կամավորական սկզբունքով՝ ինչպես վերոնշյալ կարգախոսն է պահանջում կամ պատերազմական ժամանակների օրենքին համապատասխան:
- Դրամային և արտարժութային ֆինանսական հանգանակություններն ապահովելու, հավաքագրելու համար բացվում է համապատասխան հաշիվ կամ հաշիվներ, նպա-տակահարմարության դեպքում տարբեր բանկերում: **Ներգրավված գումարների մուտքերի և ծախսերի համապատասխանության ու նպատակային օգտագործման պատասխանատվությունը կրում է Տնտեսական Խորհուրդն ու ողջ Ազգային Խոր-հուրդը,** որին էլ հաշվետու է Տնտեսական Խորհուրդը: Ֆինասական միջոցներ ներ-գրավվելու են

հայաստանյան ազգաբնակչության և արտերկրների մեր հայրենակից-ների կամավոր հանգանակություններից և տարբեր իրավաբանական կազմակեր-պությունների կողմից կտարված փոխանցումներից: Որոշ իրավաբանական գործա-բար կազմակերպությունների ու անհատների համար **Ազգային Խորհուրդը** կսահ-մանի առանձին պարտադիր-կամավոր դրամաչափեր: Դարձյալ այս ամենի համար աշխատելու է բոլորի համար բացարձակ սկզբունը.

«Ամեն ոք ու ամեն ինչ հանուն բանակի ու ռազմաճակատի, հանուն հայրենիքի ու պետության, հանուն ազգի ու Աստծո» :

- Առանձին ապրանքատեսակների գծով ներկրող և արտադրող կազմակերպություն-ների պարտադիր-կամավորական մատակարարումներից բացի, **ՏԽ** կարող է հավա-քագրված գումարների հաշվին կատարել նրանցից պատվերներ՝ պատերազմական պայմաններում նրանց տնտեսական գործունեությունը խթանելու և չկանգնելու հա-մար:
- Ապրանքների, հատկապես գյուղմթերքների և շուտ փչացող սննդամթերքների հա-մար անհրաժեշտ պահեստային տարածքների, սառնարանային պահեստների հաշ-վառում, ստեղծում, ձևավորում, կահավորում ու տնօրինում՝ հանրապետության ողջ տարածքով:
- Ծայրահեղ վատթար իրավիճակում՝ ազգաբնակչության հավանական տեղահանու-թյան դեպքում, դրա համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման օժան-դակություն, համապատասխան օթևանների, տարածքների գույքագրում, կահավո-րում, նվազագույն պայմանների ապահովում, սննդամթերքի ու առաջնային անհրա-ժեշտության ապրանքների մատակարարման նախապատրաստական աշխատանք-ների կազմակերպում և այլն:
- Այս ամենի կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական-տրանսպորտային միավորների հաշվառում, հավաքագրում, կայանների ստեղծում, դրանց շահագործ-ման համար վարորդների ցուցակագրում՝ ըստ տեղային-մարզային վերաբաշխում, հնարավոր ավտոպահեստամասերով ապահովում:
- Տրանսպորտային-տեխնիկական այս բազաները շահագործելու համար վառելա-նյութերի հավաքագրում, ներկրում, պահեստավորում, ճիշտ վերաբաշխում: Այս նը-պատակով հանրապետություն վառելանյութ ներկրող կազմակերպություններից պարտադիր-կամավորական սկզբունքով մթերում, ֆինանսական հնարավորու-թյունների առակայության դեպքում ինքնարժեքային կամ մեծածախ առավելագույն նվազ գնով մեծաքանակ պատվերների կատարում:
- Պատերազմական իրավիճակում դիմացի ձմռանը ընդառաջ ջեռուցման ապահով-ման համար այլընտրանքային մոբիլ միջոցների օգտագործման

մեխանիզմ-սարքա-վորումների մշակում, պատրաստում, պահեստավորում, դրանց համար անհրա-ժեշտ վառելանյութերի պատրաստում և պահեստավորում: Նկատի է առնվում բնա-կան գազ չլինելու դեպքում հնարավոր այլընտրանքային ջեռուցման լոկալ համա-կարգերով տների ու բնակարանների տաքացում՝ հաշվի առնելով 90-ականների մեր դառը փորձը՝ պետք է պատրաստ լինել ամեն ինչի: Նման վառարաններով ու դրանց վառելանյութերով օգնել **Ռազմական Խորհրդին** զինվորների ցուրտ ձմեռը մեղմելու համար:

- Տեղերում-համայնքներում օգնել փոքրիկ արհեստանոցների ձևավորմանը բանակին ու ինքնապաշտպանությանը անհրաժեշտ ապրանքների ու սարքավորումների ար-տադրության գծով՝ վրաններ, անձրևանոցներ, քնապարկեր, հոսպիտալային սայ-լակներ, համազգեստներ, զինվորական պարագաներ, վերոնշյալ վառարաններ, դրանց վառելանյութ, ինքնապաշտպանական կառույցների կոնստրուկցիաներ և այլն, կամ օժանդակել առկա ու գործող նման կազմակերպություններին՝ նրանց աշ-խատանքային արդյունավետությունն ու օգտակարությունը բարձրացնելու նպա-տակով և այլն:
- Հնարավորության դեպքում նաև զենք-զինամթերքի արտադրության աշխատանքնե-րի կազմակերպումը՝ ներգրավելով **Գիտական-Տեխնոլոգիական Խորհրդին** ու առկա նորարարական առաջարկները:
- Եվ այլ անհրաժեշտ միջոցառումներ, որոնք հընթացս կառաջանան կամ կառաջար-կեն համապատասխան խորհրդի կազմակերպիչներն ու իրավիճակը: Սակայն այս ամենի ճիշտ, գրագետ ու արագ կազմակերպման արդյունքում մենք կունենանք սահ-մանային կուռ **բերդ-ամրոցներ,** թիկունքային **բազա-բնակավայրեր,** որոնք կաշխա-տեն սահմանային **բերդ-ամրոցներին** անհրաժեշտ ապրանքանյութական բազայի անընդհատական համալրման ու օժանդակության համար՝ ամբողջանալով որպես անկոտրում միասնական ու իրար լրացնող, անխափան ու փոխօգնությամբ աշխա-տող կուռ **համայնք-համակարգեր,** որոնց արդյունքում պետությունը կվերածվի ան-նվաճ ու անկոտրում միասնական ու ամբողջական **ամրոց-պետության:**

Այս և նման միջոցառումների արդյունքում է, որ քաղաքացիական, ավելի ճիշտ ու կոնկրետ՝ **հայրենատիրական** ինքնակազմակերպման, ինքնակառավարման ու ինքնապաշտպանական աշխարհազորային եռամբողջ համակարգը թև ու թիկունք կանգնելով իր 18-20 տարեկան զո-րակոչային բանակին՝ իր իսկ զավակներին, կնշանավորի հայրերի ու որդիների համերաշխ, միասնական, հավաքական ու միաբան ազգային ազատագրական ոգին, պայքարն ու հաղթա-նակը: Այս դեպքում է, որ Աստված, նրա զորավոր աջը և նախախնամությունը կառաջնորդեն մեզ ի հաղթանակ և դեպի նվաճված ու արժանի **Ազգային Պետություն** և մեր կողմից պարտա-դրված խաղաղություն:

Ինչ վերաբերում է տնտեսական մոբիլիզացիայի համազգային համընդհանուր մակարդակին, այսինքն՝ արտերկրի մեր հայրենակիցների ներգրավվմանը, ապա ինչպես Արցախյան 44 օրյա պատերազմի ժամանակ նրանց ակտիվ ներգրավվածությունը՝ առավել քան ակտիվ կլինի նաև այժմ: Սակայն այդ ամենն ավելի նպատակային ու արդյունավետ կլինի **Ազգային Խորհրդի՝** որպես կառավարման կրիտիկական ենթակառուցվածքի, համակարգող կարևորագույն օղակի, ինչպես նաև արտերկրում **Համազգային Հոգևոր Խորհրդի** ու նրան օժանդակող այլ կառույց-ների ստեղծման ժամանակ իրենց երկրներում և դրանց լոկալ տարածքներում այդ աշխա-տանքների ծրագրավորված ու համակարգված կազմակերպելու դեպքում, որոնք կոորդինաց-վելու են **Ազգային Խորհրդի** ու դրա **Տնտեսական Խորհրդի** և մնացած այլ խորհուրդների կողմից ու աշխատանքների հետ համապատասխան:

Անշուշտ, կարող է հարց առաջանալ, թե ինչպե՞ս կարող են **Ազգային Խորհուրդը** և դրա կազ-մում գործող **Տնտեսական Խորհուրդն** ու մնացյալ խորհուրդները կազմակերպեն այս մեծածա-վալ համաժողովրդական տնտեսական կամ ռազմական մոբիլիզացիան՝ չունենալով պետա-կան աջակցություն և հովանավորություն, լծակներ և ռեսուրսներ, դեռ մի բան էլ ավելին՝ պե-տական ապարատի կողմից հավանական ամեն տեսակի խոչընդոտումների ու արգելակում-ների պարագայում:

Պետք է ասել, որ մեր ազգաբնակչությունն արդեն առնվազն երկու անգամ ունի նման ինքնա-կազմակերպման, ինքնակառավարման ու համակարգման ինքնաբուխ փորձառություն և մի փոքրիկ խթանի դեպքում նա նորից կգնա նույն մեխանիզմի գործարկմանը, որն իր մոտ լավա-գույնն է ստացվում՝ թեկուզև նույն ապրումները, խանդավառությունը վերապրելու համար՝ ինչպես նախորդ ժամանակներում, մինչև կապիտուլյանտների կողմից այդ ամենի փոշիացու-մը և ժողովրդի ինքնավստահության, խանդավառության, ուժականության, ոգեղենության ու ոգևորության կողոպուտը: Եթե ազգաբնակչությունը վստահեց այն կառավարման օղակին, որ այս անգամ էլ խաբված ու կոտրված, հուսալքված ու հիասթափված չի մնալու, անասելի մի ուժականությամբ ու նվիրումով կլծվի նույն այս ինքակազմակերպմանը՝ վերականգնելու հա-մար ոտնհարված ինքնասիրությունն ու արժանապատվությունը, ինքնավստահությունն ու անկոտրում կամքը, ոգեղենությունն ու ոգևորվածությունը և, կապիտալիզացնելով այս ամենը, այդ ժամանակ այս ազգը կլինի անպարտ: Այնպես որ, մենք երկակի, նույնիսկ քառակի ու բազմակի անգամ պարտավոր ենք անցնել այս ճանապարհով՝ վերականգնելու համար մեր ազ-գի պայքարելու ոգին, միասնական համագործակցությունն ու անկոտրում կամքը և հավատը սեփական ուժերի հանդեպ:

Այնպես որ, վերը ներկայացված քայլերն ամբողջությամբ իրականանալի ու իրագործելի են, ավելին՝ սրանց մասնակի իրականացման դեպքում ազգաբնակչության կոնսոլիդացիան այս գործընթացների, դրանց կազմակերպման, ըստ այդմ հենց **Ազգային Խորհրդի՝** որպես ազգային նոր կառավարման համակրգի ու

օղակի կենտրոնաձիգ առանցքի շուրջ կդառնա բնական ու ինքնաբերաբար՝ ինչպես մագնիսին ձգվող երկաթը, որից հետո, ինչպես նշում ենք, իշխանա-փոխությունը ժամերի ու տեխնիկայի հարց է։ Այս պարագայում է, որ ասում ենք՝ **փաստացի իշխանություն ձեռք բերելուց հետո տիտղոսային իշխանության վերդարձը ապահովված է ու երաշխավորված։**

Իսկ պետական իշխանություն վաստակելուց հետո համընդգրկուն ու համապարփակ մոբի-լիզացիան իր երկու ճյուղերով՝ համապետական ու համազգային մակարդակներով կդրվի պե-տական ռեսուրսների, հովանավորության ու նպատակային քաղաքականության ռազմավա-րության ռելսերի վրա։

Այստեղ կարող ենք ասել, որ ազգային պետության կառուցման համար անհրաժեշտ ու համա-պատասխան արժեքային հիմքից բխող տնտեսվարման նոր համակարգի համար կտարվեն նոր միջոցառումներ՝ սկսած վերը նշված ողջ նյութատնտեսական, ապրանքահումքային, ար-տադրաարդյունաբերական, գյուղատնտեսական-հողային և մնացյալ այլ ռեսուրսների ու հզո-րությունների գույքագրումից, հաշվառումից մինչև տնտեսական աշխարհագրության քարտե-զագրում և անհրաժեշտ ձեռնարկությունների ստեղծման պլանավորում, նախահաշվարկային բիզնես-ծրագրերի կազմում և դրանց համար ֆինանսական ներդրումների ապահովում, սպաս-վող արտադրանքի սպառման շուկաների և ենթակառուցվածքների կազմակերպում, ընդհուպ մինչև ակնկալվող արդյունքների հաշվարկ։ Սակայն այս թեմային կարելի է անդրադառնալ և այն հնարավոր կլինի շոնդալից կերպով կյանքի կոչել պետական ապարատի լծակների օգտա-գործման հնարավորությունների ձեռք բերման և ամենակարևորը, ազգային հայեցակարգային իշխանության ձևավորման, դրա կենսագործման համար անհրաժեշտ ազգային երկարաժամ-կետ ռազմավարական նախագծերի, դրանց սպասարկող միջնաժամկետ և կարճաժամկետ մարտավարական ծրագրերի ու քայլերի առկայության դեպքում։

4/ <u>Ոգեղեն-գաղափարական մոբիլիզացիա</u>.

Երբ խոսում ենք սպառվող Հայաստանի Հնարապետությունից Հայոց Ազգային պետության անցում կատարելու մասին, ապա պետք է նկատի ունենանք ոչ թե սոսկ պարզունակ իշխանա-փոխություն, այլև համակարգային ու կառուցվածքային, համընդհանուր ու համապարփակ բարենորոգություն ու կենսանորոգություն ազգային ու պետական ողջ համակեցական կյան-քում, այդ թվում նաև ոգեղեն-գաղափարական դաշտում։ Առավել ևս, որ ազգային պետություն հնարավոր չէ կառուցել ազգային գաղափարախոսությունից դուրս և հատկապես, այլոց գաղա-փարական զեղծարարությունների ու մանիպուլյացիաների հիման վրա։

Ոգեղեն-գաղափարական առաջնահերթ քայլերից են.

- Պատերազմական իրավիճակում գտնվող պետության համար առաջնային ոգեղեն-գա-ղափարական մոբիլիզացիան պետք է ուղղված լինի մերօրյա հայրենական պատերազ-մի, ազգային ազատագրական պայքարի,

համաժողովրդական դիմադրության կազմա-կերպման, ազգի ու պետության վերածննդի համար անհրաժեշտ ոգու, գիտակցության բարձրացման, կամքի ամրապնդման, նվիրումի ու անձնազոհության պատրաստակա-մության, հաղթանակի տրամադրությունների, համոզմունքի, հավատքի հզորացմանն ու կենսագործմանը։ Որի լավագույն բանաձևում-սահմանումներից պետք է լինի.

«Ամեն ոք ու ամեն ինչ հանուն բանակի ու ռազմաճակատի, հանուն հայրենիքի ու պետության, հանուն ազգի ու Աստծո» :

- Ներքաղաքական տիրույթի առողջացման համար հանրության գիտակցությունից դուրս շպրտել՝ նախկին-ներկա, սևեր-սպիտակներ, հներ-նորեր և այլ նմանատիպ տա-բաբաժանող ու երկփեղկող, հասարակությանը հազար ու մի մասերի բաղդատող, հյու-ծող, ուժերը ջլատող հասարակական-քաղաքական վիրուս հանդիսացող նեյրոլինգ-վիստիկ ծրագրային ալգորիթմները։ (Սա չի նշանակում, որ աչք է փակվում այդ տարբեր բևեռներում կանգնած քաղաքական պարագլուխ-պատասխանատուների ու նրաց ակ-տիվորեն աջակցած հանցակից ուժերի ու անհատների նկատմամբ։ Նրանք բոլորն էլ պատասխանատու են իրենց գործած անօրինությունների և հանցավոր անգործություն-ների համար՝ ժողովրդի, պատմության, պետության ու Աստծո առաջ)։
- Արտաքին քաղաքական կողմնորոշումներում հանրության միտքը մաքրել, ձերբազա-տել արևմտամետ, թե ռուսամետ կամ այլ նման կեղծօրակարգային ու ապակողմնորո-շող, հասարակությանը դարձյալ տարաբաժանող մանիպուլյատիվ ալգորիթմներից ու օրակարգերից։ (Սա էլ չի նշանակում արտաքին քաղաքակնության չեղարկում, կամ տարբեր աշխարհաքաղաքական ուժերի ու բևեռների հետ համագործակցություններից ու ռազմավարական դաշնակցային հարաբերությթուններից հրաժարում։ Ուղղկի խնդի-րը՝ նման օրակարգերը արհեստականորեն գեներացվող, մանիպուլացնող ու հասա-րակությանը իրար դեմ լարող ալգորիթմների ու ծրագրեի չեզոքացումն է)։
- Իսկ այս ամենի չեզոքացման լավագույն ու արդյունավերտ, արագ և ուղիղ, ազնիվ ու շի-տակ միակ ճանապարհը սեփական ազգային գաղափարի ռազմավարական երկարա-ժամկետ և սրան ծառայող կարճաժամկետ ու միջնաժամկետ մարտավարական նախա-գծերի առկայության ապահովումն է։
- Իսկ նման ազգային պրոյեկտը պետք է ունենա հոգևոր-ոգեղեն հիմք, ազգային բարոյա-կան-արժեհամակարգային ներծծվածություն, գաղափարական-փիլիսոփայական հիմ-նավորվածություն և գործնական-իրատեսական իրացվելիություն։
- Իսկ եթե շեշտում ենք, որ նոր **Ազգային Պետությունը** չենք կարող կառուցել հին հանրա-պետական մոդելի հնացած կարծրատիպերի վրա՝ ժողովրդավարություն, քաղաքա-ցիական հասարակություն ու դրանում՝ բաց

հասարակություն, հիմնարար ազատու-թյուններ, իբր մարդու իրավունքներ, հազար ու մի տեսակ իրավապաշտպան կառույց-ներ և այլ «մոգական», իրականում կեղծ ու շինծու, մանիպուլյատիվ բառերի ու հասկա-ցությունների վրա, որոնք վաղուց մաշվել ու սպառվել են (և ոչ միայն ՀՀ-ում, այլև այդ հանրապետական պետականակարգության հիմնադիր ու դրոշակակիր երկրներում), ապա գաղափարական մոբիլիզացիայի կարևորագույն թիրախը պետք է դառնա ազգա-յին պետության կառավարման և տնտեսվարման ազգային նոր ու արդիականացած հա-մակարգերը, առանց որոնց կմնա հին ու նեխած համակարգը, որի դեպքում ինչ անուն ու պիտակ էլ կպցնենք վրան, դրանից վերջինիս էությունն ու բովանդակությունը չի փոխվի։

- Սրանից բխող գաղափարական մյուս հենասյունը, որի վրա պետք է կենտրոնանա ազ-գային գաղափարական միտքը, խախտված կամ իսպառ բացակայող **արդարության վե-րականգնումն է մեր ազգային ու պետական կյանքում։**
- Ոգեղեն-գաղափարական մոբիլիզացիայի մյուս կարևոր կետերից մեկը ներկայիս նյու-թապաշտ, էգոցենտիկ ու հաճույքների ու հարմարավետության, գեդոնիզմի՝ հաճույքա-մոլության կեղծարժեքությունից ու ապարժեքությունից դուրս **հոգևոր առաջնահերթու-թյան և գերակայության ներքո նոր արդար ու առաքինապաշտ հասարակության կերտ-ման նպատակադրումն է։**
- Մեկ խոսքով, կետերի բազմազանությունն այս փաստաթղթի շրջանակներում ամբող-ջությամբ չթվարկելու համար, կարող ենք ասել՝ **ազգային ինքնության ինքահիրացման ու կայացման համար անհրաժեշտ ոգեգաղափարական ձևակերպումների ու սահմա-նումների և դրանց իրագործման ռազմավարական ծրագրերի ու մարտավարական քայլերի մշակումը, համակարգումն ու ամբողջացումն է՝ անցյալ-ներկա-ապագա հա-ղացույցի ողջ համապատկերում, որը հենց Ազգային Խորհրդի կենսագործման հիմնա-քարն է և, առավել ևս, Հոգևոր Խորհրդի պարատականությունն ու առաքելությունն է։**

5/ <u>Տեղեկատվական-հաղորդակցային մոբիլիզացիա</u>.

Խորապես գիտակցելով ժամանակակից տեղեկատվական ու հաղորդակցային տեխնոլոգիա-ների հզոր ու որոշիչ առկայությունն ու դերակատարությունը, առանց որոնց դժվար է պատկե-ացնել մեր առօրյան, որոնք մեծագույն ազդեցություն ունեն թե՛ անհատական, թե՛ հավաքա-կան մարդկային գիտակցության, կողմնորոշումների ու վարքագծի վրա, առավել ևս, ներկա-յում ընթացող հիբրիդային պատերամների գործիքակազմերում դրանց ակտիվ ու որոշիչ կիրառումը, պարտավոր ենք մենք էլ անցկացնելու սեփական **տեղեկատվական-հաղորդակցային մոբիլիզացիան՝** համապատասխան տեխնոլոգիաների ու մասնագետների ակտիվ ներգրավվածությամբ ու արհեստավարժ կիրառությամբ՝ թե՛ մեր հավաքական ինքկազմակերպան ու ինքնակառավարման, թե՛ համընդհանուր ու համապարփակ

մոբիլիզացիան իրականացնելու, թե՛ նույն այդ հիբրիդային պատերազմի այս դաշտում տանուլ չտալու համար։

Այս նպատակով **ԱԽ**-ում ձևավորվող **ՏՀԽ**-ի կարևորագույն գործառույթներից մեկը հանդի-սանում է գրագետ, օպերատիվ և արդյունավետ կազմակերպել այս **ՏՀՄ** ողջ համապարփակ գործընթացները թե՛ հանրապետական ու համազգային մակարդակներում, թե՛ հակառակորդի դաշտում, թե՛ համաշխարհային տարբեր հարթակներում ու երկրներում՝ խստագույնս համա-կարգված աշխատելով ու համագործակցելով **ՌԽ**-ի հետ ու նրա ցուցումներով ու խորհուրդնե-րով՝ կոնկրետ թեժ կրակային պատերազմական գործողությունների ընթացքում հիբրիդային պատերազմի այս փափուկ ուժի առավել նպատակային ու թիրախային, հասցեական ու ար-դյունամետ կիրառման համար։

Ինչպես տեսանք Արցախյան 44 օրյա պատերազմի օրերին, մենք առաջնահերթ տանուլ տվե-ցինք պատերազմն հենց այս և, հատկապես տեղեկատվության վիրտուալ տիրույթում՝ սոցիա-լական ցանցերում ու լրատվության թվային հարթակներում՝ կեղծ ու իրականությունից կտրը-ված լուրերով, խուճապ ու հիասթափություն կամ անհիմն ու սին ոգևորություն առաջացնելու, հետո դարձյալ հուսալքություն ու հիասթափություն, վախ ու տագնապներ գեներացնող տեխ-նոլոգիական ծրագրավորված մանիպուլյացիոն տեղեկատվությամբ ու ազդակներով, որոնք ալիքաձև, իմպուլսային հերթագայություններով ու տատանումներով սեյսմավտանգ դարձրե-ցին անձնային-հոգեբանական և սոցիալ-հասարակական հուզազգացմունքային ու հոգեմտա-վոր կառույցը, իսկ նոյեմբերի 9-ին վերջնական հարված հասցնելով քանդեցին այն, որը մինչև այսօր էլ հնարավոր չի լինում վերականգնել՝ խորացնելով այդ տագնապներն ու վախերը, ընդ-հուպ մինչև անհատական ու հավաքական ընկճախտի ու խոր դեպրեսիայի։

Եվ այս ամենը չեզոքացնելու, մեդիա դաշտը վերահսկելու, թշնամուն արժանի պատասխա-նելու, այս հարթակներում նրանց դիվերսիոն հարձակումները կանխելու, ազգաբնակչությանը կոնսոլիդացնելու, հոգեմտավոր, հուզազգացմունքային ու նյութաֆիզիկական կարողություն-ներն ու ուժականությունը ճիշտ ուղղորդելու համար անհարժեշտ է այս ոլորտը վերցնել խիստ վերահսկելի ու կառավարելի հսկողության ու ենթակայության տակ՝ այս ամենն ազգաշահ ու պետականանպաստ օգտագործելու համար։

Իսկ նման միջոցառումներն ու գործողությունները և ողջ գործընթացը կազմակերպելու հա-մար, առավել ևս, **Ազգային պետություն** կառուցելու **ԱԽ**-ի նվիրական ու հեռահար նպատա-կադրումները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է ունենալ վերազգային կորպորացիաների ենթակայությունից ու վերահսկողությունից, նրանց մանիպուլյատիվ ծրագրավորումներից ու ուղղորդումներից դուրս **սեփական ազգային տեղեկատվական-հաղորդակցային թվային հար-թակներ ու տեխնոլոգիաներ։** Սրանց ձևավորման ու գործարկման առումով **Աշխարհաժողովի նախաձեռնող խումբն** արդեն ունի մշակված և կիրառվող նման ազգային

հարթակներ, որոնք արագորեն կարող են դառնալ և՛ խթան, և՛ միջոց **ՏՀՄ** իրագործելու համար, որտեղ հայության հավաքականությունը ինքնակազմակերպվելու է **արժեորակային ստեղծարար համագործակ-ցությամբ, արժենշանակության մշակութային ստեղծագործականությամբ, արժեշահության փոխօգնությամբ և արժենպատակային փոխլրացմամբ:**

ՏՀԽ-ի ձևավորումից հետո, մի կարճ ժամանակում խորհուրդը պետք է ներկայացնի իր գոր-ծունեության ռազմավարության, դրանց ծառայող մարտավարական քայլերի, առկա ու անհրա-ժեշտ գործիքակազմերի, դրանք սպասարկող անձանց, բաժիների ցանկը և այլն:

Սա այն հարթակն ու տիրույթն է, այն գործքիքակազմն է, որի միջոցով անասելի հեշտությամբ ու արագությամբ կայանալու են բազմաշերտ մոբիլիզացիայի մնացած շերտերը, որովհետև այստեղ լուծվում է անչափ մի կարևոր խնդիր, որն այսօր աչքաթող է արվում: Հարցը վերաբե-րում է **ինքնակազմակերպում վերևից, թե ներքևից** տարբերակներին: Եվ թվում է, թե այն իրա-կանությունը, որում գտնվում է մեր պետականությունն ու ազգաբնակչությունը, անհնարին է այդ երկու տարբերակների որևիցե մեկի իրականացումը, քանզի **վերևիցը՝** պետական ապա-րատի կողմից ինքնակազմակերպվելն անհնարին է, որովհետև ի գլխանե տարվում է հակա-ռակ քաղաքականություն ու գործընթաց՝ կազմաքանդելու սոցիալ-հասարակական, ազգային-պետական ողջ համակեցական կյանքը՝ իր բոլոր կառույցներով: Իսկ այդ պետական լծակները ազատագրելու և դրանք ազգանպաստ ու պետականաշահ օգտագործելու համար էլ պետք է **ներքևից՝** հասարակական ինքնակազմակերպում, որը նույնպես այսօր դարձել է անհնարին՝ վկա վերջին երկու տարիների բազում ապարդյուն ջանքերը /չխորանալով ու չմանրամասնե-լով դրանց ձախողումների ու անհաջողությունների պատճառները/, քանզի ատոմիզացված ու մարգինալացված, իրար հանդեպ խոր ատելությամբ ու թշնամանքով լցված տարաբաժանված հասարակությունը ինքնուրույն որևէ առողջ քայլ անելու այլևս անընդունակ է դարձել: Եվ այս անելանելի թվացող փակ շղթայի մեջ, իսկ ավելի ճիշտ դրանից դուրս ի հայտ է գալիս մի գործի-քակազմ, որը միևնույն ժամանակ և **վերև է,** քանզի ծրագրավորվում-մոդելավորվում, նախա-գծվում-ճարտարապետվում, ուղղորդվում-վերահսկվում, կազմակերպվում-կառավարվում է ռազմավարական հայեցակարգերով ու նպատակադրումներով, և մյուս կողմից էլ միևնույն ժա-մանակ **ներքև է,** քանզի իր մեջ ունակ է կրելու, ներառելու, հավաքագրելու, համակարգելու, ամբողջացնելու ներքևը՝ հասարակությանն իր բազում շերտերով ու դրսևորումներով: Հետևա-բար, այս երկուսի նպատակային ու հեռահար, ճշգրիտ ու խելամիտ կոորդինացումը կապահո-վի մի նոր որակի ինքնակազմակերպման ու ինքնակառավարման արդիականացած մակար-դակ, որը դուրս է մինչ այս կիրառվող՝ վերևից, թե ներքևից ձևաչափին ու հասկացությանը: Ահա թե ինչու ենք ասում նաև, որ եթե մեր ցանկալի իրականությունը նախագծեն ու ճարտա-րապետենք վիրտուալ տիրույթում, ապա դրա պրոյեկցիան՝ արտապատկերումը, ռեալիզա-ցիան

նյութական-ֆիզիկական աշխարհում կդառնա առաջինի տրամաբանական ու պահանջ-ված անհրաժեշտությունն ու բնական կենսագործունեությունը:

Անշուշտ, դարձյալ կառաջանա պարզ հարցադրում, իսկ առանց պետական ռեսուրսների ու լածակների, որտեղից ֆինանսանյութական միջոցներ այս ամենը կազմակերպելու համար, առավել ևս, որ գիտենք թե նման տեխնոլոգիաների կիրառումը, էլ չենք ասում ստեղծումը, որ-քան ահռելի ու աստղաբաշխական գումարների հետ են կապված:

Սակայն նման թերահավատությանը պետք է պատասխանենք, որ **Աշխարահաժողովի նախ-ձեռնող խմբի** շրջանակներում մշակված ու կիրառվող թվային հարթակներն ու գործիքակազ-մերը մշակվել ու ստեղծվել են չափազանց սուղ միջոցներով ու նվիրյալ անհատների էնտու-զիազմի ու ինքնանվիրումի արդյունքում՝ առանց մեծ ֆինասների ու հովանավորության: Չմո-ռանանք նաև, որ այդ իշխանական լծակների ազատագրման և դրանք ճիշտ ուղղորդման հա-մար էլ առավելագույնս օգտակար են լինելու հենց այս նույն տեխնոլոգիաները, որոնց մեկ-նարկմամբ ու օժանդակության արդյունքում հնարավոր կլինի կազմակերպել այս բազմաստի-ճան մոբիլիզացիոն գործընթացները, որոնց արդյունքում կկայանա ազգաբնակչության հավա-քական ու նպատակային գործունեությունը, այդ թվում և իշխանության վերադարձն ազգին, որից հետո այդ ազգային իշխանությունն էլ փոխադարձաբար իր հզորություններով էլ ավելի է զարգացնելու, հզորացնելու ու ամբողջացնելու համազգային տեղեկատավական-հաղորդակ-ցային թվային հարթակները և գործիքակազմերը:

Անշուշտ **ՏՀՄ**-ի կազմակերպան շրջանակներում կարելի է խոսել նաև հեռուստաալիքների, մամուլի և այլ հաղորդակցության միջոցների հանդեպ վերահսկողության կամ ալտերնատիվ սեփական միջոցների ստեղծման և նպատակային ու համակարգված գործարկման ու համա-գործակցության մասին, սակայն այդ ամենը կմշակվի և կներկայացվի **ՏՀԽ** կազմավորվելուց հետո:

6/ <u>Քաղաքական մոբիլիզացիա</u>.

Մոբիլիզացիայի բազմաշերտ գործընթացը ներկայացնելիս առաջնահերթ սկսեցինք **Կառա-վարման մոբիլիզացիայից**՝ նշելով այն որպես **քաղաքական-կառավարման մոբիլիզացիա,** որովհետև ինչպես ասված է. **«քաղաքականությունը տնտեսության խտացված արտահայտու-թյունն է»,** նույնպես էլ կարելի է սահմանել, որ **կառավարումը քաղաքականության խտացված արտահայտությունն է:** Քանզի առաջին դեպքում՝ **քաղաքականությունը ուղղված է տնտեսու-թյան կազմակերպմանը,** որը մեր նյութական կյանքի հիմքն է, ապա երկրորդ դեպքում՝ **կառա-վարումն ուղղված է հենց այդ քաղաքականության կազմակերպմանը:** Այսինքն՝ սրանք երեքն էլ մեկը մյուսով փոխպայմանավորված են ու փոխլրացնող, մեկը մյուսով ներշաղախված են ու կազմում են մեկ ամբողջություն, թերևս առանց մեկի

մյուսի լիարժեք ու արդյունավետ աշխա-տանքն արգելակվում է, կնշանակի խաղտվում է համակեցական կյանքի բնականոն վիճակն ու զարգացումը։

Սակայն կառավարման մոբիլիզացիան շեշտված էր, որպես կառավարման **նոր կրիտիկա-կան ենթակառուցվածքի** ձևավորման գերխնդիր ու հրամայական, որը տվյալ դեպքում հանդի-սանալու է **Ազգային Խորհուրդը։** Սակայն նման կառավարման համակարգի ձևավորումը չի կարող զերծ մնալ քաղաքականությունից, քանզի հենց վերջինիս և՛ ձևավորումը, և՛ կենսագոր-ծումն ինքնին արդեն քաղաքականություն է։ Սակայն ինչպես նշել ենք, մեր հասարակությունը վարակակիր է քաղաքական ու սոցիալական մահացու վիրուսներով, որոնք այսօր հյուծում են մեր ողջ ազգային-պետական իմունիտետ-դիմադրողականությունը և համակեցական կյանքը։ Այս առումով անհրաժեշտ է խորապես հասկանալ քաղաքական մոբիլիզացիայի նոր հայեցա-կարգային առանձնահատկություններն ու դրա կազմակերպման, իրականացման մեխանիզմ-ներն ու եղանակները՝ զերծ մնալու համար քաղաքական հին հայեցակարգերի հիվանդածին բացիլներից ու քաղցկեղածին բջիջներից։

Նշելով, որ կառավարումը խտացված քաղաքականություն է, նկատի է առնվում, որ յուրա-քանչյուր կառավարում, այն էլ պետության կառավարում ենթադրում է որոշակի քաղաքական կուրսի, վեկտոր-ուղենիշի առկայություն, որի տրամաբանության շրջանակներում էլ տեղի է ունենում կառավարումը։ Եվ կախված հենց այդ քաղաքական կուրսի հոգևոր-գաղափարական լիարժեքությունից, արժեքային-փիլիսոփայական հագեցվածությունից կպայմանավորվի կա-ռավարման արդյունավետության և հաջողությունների հասնելու հավանականությունը։

Իսկ ինչ նման հոգևոր-արժեքային, գաղափարա-փիլիսոփայական հիմքերի վրա է հենվում և ուղղորդվում մեր ազգային և պետական քաղաքականությունը և կառավարման գործընթացն այսօր ու նաև երեկ՝ հետանկախության այս 30 տարիների ընթացքում։ Մեկ բառով՝ **ուլտրալի-բերալ կամ ծայրազատական գաղափարաբանության,** որը ոչ թե ազգային չէ, այլև ավելին՝ խիստ ապազգային ու հակազգային է, ի վերջո այն նաև հակապետական է, որովհետև քանդում է այդ պետականության կարևորագույն հիմքերը, ինչի վրա խարսխվում ու կայանում են ողջ հասարակական-ազգային-պետական համակեցական կյանքը։

Սա ներկայիս պետական կազմավորումների, ազգ-համակարգերի ամենավտանգավոր մա-հացու քաղաքական-հասարակական վիրուսներից մեկն է։ Սակայն սա դեռ ամենը չէ, մեր քա-ղաքական կյանքի մյուս ողբերգությունը, որը ոչ մի կերպ չի թողնում, որ մենք առողջանանք, այն քաղաքական կազմավորումներն են, որոնք սպունգի պես ներծծում են այդ վիրուսները և հետո ակտիվորեն տարածում մեր ազգային-պետական կյանքում։ Դրանք քաղաքական կու-սակցություններն են, որոնք վերածվելով չարորակ ուռուցքների՝ դարձել են մեր գլխին պատու-հաս։ Բայց ողջ անելանելի վիճակը կայանում է նրանում, որ մենք չենք կարողանում դուրս գալ այս փակ շղթայից՝ **մի կողմից** քաղաքական կուսակցությունները, որոնց խնդիրն է մասնակցել, կազմակերպել ու կառավարել ազգային-պետական, սոցիալ-

հասարակական կյանքը, իրենք են հենց հիվանդության բուն պատճառը, որովհետև պարարտ հող են այդ քաղաքական վիրուս-ների բազմացման համար, **մյուս կողմից՝** դիտավորյալ կենսաքայքայիչ վարակավորված այն արժեքային-գաղափարական վեկտորը, կուրսը, որոնց հիմքով, տրամաբանությամբ պետք է կայացվի այդ քաղաքականությունը: Դրա համար էլ յուրաքանչյուր քաղաքական գործընթաց, անկախ նրանից, թե ինչ քաղաքական ուժ է կազմակերպում, իշխանական կամ ընդդիմադիր ինչ կեցվածքով ու պիտակով, միևնույնն է, հակառակ է գործում մեր ազգային ու պետական շա-հերին: Դրա համար խնդիրը պետք է ձևակերպենք պարզ ու հստակ, որի գիտակցումից, ճանա-չումից, ընդունումից և հաղթահարումից հետո կարող ենք խոսել նոր առողջ ու կենսարար քա-ղաքականության մասին: Իսկ այդ խնդիրը կայանում է հետևյալում՝ քաղաքական կուսակցու-թյունները որպես գործիք ու միջոց իրենց վաղուց սպառել են և այլևս ակտուալ չեն, և այնպիսի հասկացություններն ու կատեգորիաները, որոնք 17-18-րդ դարերից սկած հիմք հանդիսացան ներկայիս հանրապետական պետականակարգությունների համար նույնպես վաղուց մաշվել ու դարձել են անկենսունակ, դեռ մի բան էլ ավելին՝ դրանք են դարձել օրգանիզմը թունավորող անաշխատունակ համակարգեր՝ ինչպես դիալիզով հիվանդ մարդկային օրգանիզմը:

Հետևաբար, երբ խոսում ենք քաղաքական մոբիլիզացիայի մասին, խնդիրը չի կայանում այս հիվանդ բջիջներին մի սեղանի շուրջ հավաքելու, կամ նրանցով առողջ գործընթաց սկսելու մեջ, դա ուղղակի անհնարին է: Քաղաքական մոբիլիզացիան առաջնահերթ նշանակում է **նախ՝** ազգային ինքնությունից ու առաքելությունից բխող նոր հայեցակարգային կենսաքաղաքակա-նություն ներկայիս օտարածին ու օտարասին ապաքաղաքական գաղափարների, կուրսերի ու վեկտորների փոխարեն: Եվ **երկրորդ՝** վերջին հաշվով մեզ անհրաժեշտ է նոր քաղաքական միա-վոր և այն առաջնահերթ պետք է լինի **հայեցակարգային իշխանությունը**, որը ղեկավարվում և ուղղորդվում, կազմակերպում ու կառավարում է սեփական **ազգային ինքնությունից ու առա-քելությունից ծնվող ազգային գաղափարախոսությամբ ամբողջացող երկարաժամկետ ռազմա-վարական հայեցակարգային նախագծերով ու ճարտարապետումներով, դրանց սպասարկող միջնաժամկետ ու կարճաժամկետ մարտավարական ծրագրերով ու քայլերով և այս ամենը կյանքի կոչող կենսաքաղաքականությամբ:**

Միայն այս դեպքում, երբ կա ազգային հայեցակարգային մեգանախագիծ, կարող է ձևավոր-վել ազգային հայեցակարգային իշխանություն և նոր միայն կարող է իրականացվել ազգային կենսաքաղաքականություն, որից հետո նոր միայն կարող է գոյություն ունենալ ինքնիշխան ազգային պետություն:

Իսկ քաղաքական գործիչներն ու կառույցները կլինեն ոչ թե ներկայիս քաղաքական ժանգ-լյոր-ձեռնածուները, ֆոկուսնիկ-աճպարարները, ակրոբատ-լարախաղացները, գաստրոլյոր-հյուրախաղորդները, կլոուն-ծաղրածուները, ցիրկաչ-կրկեսավարները կամ այլ կարգի խեղ-կատակ-խամաճիկները, այլև ազգային ինքնություն ու դիմագիծ,

նպատակներ ու երազնքներ ունեցող դրանցով ապրող ու առաջնորդվող նվիրյալները։ Նման պարագայում կարող է ձևա-վորվել իրական ազգային ընտրանի, հակառակ ներկայիս ամեն տեսակ ինքնակոչ կեղծ էլիտա-ների։

Հետևաբար, քաղաքական մոբիլիզացիան թերևս ամենակարևոր ու ամենանուրբ գործըն-թացն է հերթական անգամ ինքներս մեզ չվարակելու և մի նոր փորձանգ մեր գլխին չբերելու համար։ Այս իմաստով ու զգուշավորությունից ելնելով էր, որ **Քաղաքական Խորհրդի** ձևավոր-ման բաժնում նշեցինք, որ հարկ եղած դեպքում, այս քաղաքական վիրուսով ողջ **Ազգային Խոր-հուրդը** չվարակելու համար, կարող է սկզբնական շրջանում քաղաքական ֆունկցիան իր վրա վերցրին **Հոգևոր Խորհուրդը** կամ **Ազգային Խորհուրդը։**

Այստեղ կարող է առաջանալ անկեղծ հարցադրում՝ իսկ մի՞թե **Հոգևոր Խորհուրդը,** որը ձևա-վորվելու է բարձրաստիճան հոգևորականներից, կարող է զբաղվել քաղաքականությամբ, չէ որ դա հոգևոր դասի գործառույթը չէ, նույնիսկ դրա փորձառությունն այսօր չունեն, և առավել ևս, որ սահմանադրության մեջ ամրագրված է՝ **ՀՀ աշխարհիկ պետություն է,** և մի՞թե այս ամենով մենք չենք գնում կրոնապետության։ Նման հարցադրումների պատասխանները ամբողջաց-նում ենք մեկ այլ հարացուցային ձեռնարկի մեջ՝ **Հոգևոր հեղափոխություն** վերտառությամբ։ Այստեղ ուղղակի նշենք, **առաջին՝** քաղաքականությունը մշակում է **հայեցակարգային իշխա-նությունը,** որի մարմնավորումն ու առաջնային օղակ է հանդիսանալու **Ազգային Խորհուրդը,** որի կազմակերպման ու կառավարման պատասխանատվությունն իր վրա է վերցնում **Հոգևոր Խորհուրդը,** մինչև կձևավորվեն ազգային կառավարման համակարգի լիարժեքության համար անհրաժեշտ մնացյալ օղակները։ **Երկրորդ՝** իսկ եթե նման ազգային հայեցակարգային քաղա-քական նոր կուրսի, ուղեգծի, գործունեության համար անհրաժեշտ են այլ նկարագրի ու խառն-վածքի, կրթության ու քաղաքական ինքնադրսևորման որակներ ու առանձնահատկություններ ունեցող անձինք, ապա նրանք հանդես են գալու որպես մեկ ամբողջական ազգային կառավար-ման համակարգի մաս՝ որպես ազգային քաղաքական լիդերներ, և նրանք այդպիսին կլինեն ու կհամարվեն, եթե գործեն ու ծառայեն հենց այդ հայեցակարգային իշխանության տրամաբա-նությամբ ու շրջանակներում՝ հանուն այդ ազգային ռազմավարական հայեցակարգերի կայաց-ման։ Այսինքն՝ ոչ մեկը նման ազգային քաղաքական լիդերների անհրաժեշտությունն ու առկա-յությունը չի բացառում, այլև նրանց ներկայությունն ու գործունեությունը հաշվի է առնվում բա-ցառապես մեկ ամբողջական ազգային կառավարման համակարգի մեջ՝ դուրս ամեն տեսակ կուսակցությունների, իշխանություն-ընդդիմություն կեղծ տարաբաժանված նիհիլիստական՝ ոչնչականության, անհանդուրժողականության և անտագոնիստական՝ հակադիր մրցակցու-թյան, հակամարտության ու պայքարի մեջ, որն արդեն շուրջ 135 տարի և, առավել ևս, հետան-կախության 30 տարիների ընթացքում ինքնոչնչացնում ու ինքնաքայքայում ազգային-համա-կեցական կյանքը։ Վերջապես **երրորդ՝** այս հարթության մեջ անգամ

խնդիրը քաղաքական կա-ռավարման ու ղեկավարման մասին չէ խոսքը, այլ ավելին՝ **իշխանության**։ Իսկ մեր առաջար-կած հայեցակարգային իշխանության մեջ քաղաքականությունն իրականացնում է ոչ թե սոսկ արտաքինից երևացող տիտղոսային քաղաքական իշխանություն կրող այս կամ այն կուսակ-ցությունը կամ ուժը, այլ իշխանության բոլոր ձևերը՝ **հոգևոր, քաղաքական, ռազմական, տնտե-սական, գիտամտավոր** ամբողջականանում են՝ որպես **հայեցակարգային՝ կոնցեպտուալ իշ-խանություն,** որի բարձրագույն դրսևորումը հոգևոր է, քանզի ողջ նյութական-ֆիզիկական իրականությունը պետք է օգտագործվի ու ծառայի, զարգանա ու կայանա, բարենորոգվի ու կենսանորոգվի, վերաճի ու ներդաշնակվի հանուն հոգևոր գերակայության և կատարելության։

Ամփոփելով այս քաղաքական մոբիլիզացիայի բաժինը նշենք, **նախ՝** քաղաքական կուսակ-ցությունները՝ որպես վերջին 200 տարվա կառավարման օղակներ արդեն սպառվել ու ժամա-նակավրեպ են, կենսունակ ու ակտուալ չեն։ **Երկրորդ՝** Այս 200 տարվա քաղաքական գործըն-թացները, որոնց սպասարկում էին այդ նույն քաղաքական կառույցները, հիմնվում էին մի շարք հասկացությունների վրա՝ քաղաքացի, քաղաքացիական հասարկություն, ժողովրդավարու-թյուն, ազատ ու թափացիկ ընտրություններ, ընդդիմություն-իշխանություն, մարդու հիմնա-րար ազատություններ և իրավունքներ, այդ իրավունքները պաշտպանող իրավապաշտպան կառույցներ, միջազգային իրավունք և դրանք սպասարկող միջազգային կառույցներ և այլն, սակայն այսօր էլ, նույն այդ երկդարյա ընթացքից հետո այդ հասկացություններն ու կառույց-ներն էլ ենթարկվել են անվերականգնելի քաղաքական ամորտիզացիայի՝ մաշվածության և դարձյալ կենսունակ չեն կարգավորել ոչ լոկալ, ոչ էլ տոտալ մոլորակային կյանքն ու միջպե-տական և միջազգային հարաբերությունները։ Վերջապես **երրորդ՝** այդ երկդարյա ընթացքը, որն այս վերին երկուսով հիմք հանդիսացավ ձևավորվող հանրապետական պետականակար-գություններին, որոնք եկան փոխարինելու միապետություններին, նույնպես գտնվում են խիստ խոցելի ու անկենսունակ կարգավիճակում, վկա մեր հանրապետությունը մեր իսկ օրերում, մեր իսկ աչքի առաջ։ Այսինքն՝ նման տեկտոնական տեղաշարժերը ենթադրում են, որ հանրա-պետական ինքնիշխան պետությունների ժամանակներն արդեն անցնում են, որոնց փոխարի-նելու է գալու կառավարման նոր մոդել, որը բացառելու է վերը թվարկած բոլոր արժեքները, որոնց վրա հիմնավում էին հանրապետականակարգությունները, հետևաբար՝ բացառվելու է նաև հենց այս պետականագության ձևը։

Եվ այս արագ ու խելահեղ տեմպերով փոփոխվող աշխարհում խոսել, մտածել ու իբր քաղա-քականությամբ զբաղվել քաղաքականապես մաշված ալգորիթմներով, ըստ այդմ, իբր ժողովր-դավարական երկիր ու պետություն կառուցել, մեղմ ասած քաղաքական տհասություն է, ան-կախ նրանից թե ով է դա բարբաջում։ Դրա համար էլ այս ճանապարհացույցի սկզբից ևեթ շեշ-տում ենք, որ **անհրաժեշտ են նոր**

մատրիցաներ, ալգորիթմներ, դրանցով կազմված ազգային նոր հայեցակարգային նախագծեր ու սրանց սպասարկող նոր կենսաքաղաքականություն:

Հետևաբար, քաղաքական մոբիլիզացիան չի կարելի իրականացնել իրենց վաղուց վարկա-բեկած քաղաքական կառույցների կամ անձերի հետ, ոչ էլ քաղաքական տղայականությամբ ինքնահաստատվել ցանկացող նորաելուկ ու չկայացած, բայց մեծ ամբիցիաներ ու հավակնո-տություններ ունեցող քաղաքական բառապաշարով ու մտավարժանքներով ժանգլյորությամբ զբաղվողների հետ քաղաքական մուրացկանությամբ և ուզվորությամբ զբաղվելով: Նրանք վա-ղուց պատմության անցյալի էջում են, սակայն դրա մասին իրենք էլ դեռ չգիտեն կամ չիմանալու են տալիս: Իսկ ներկան, առավել ևս ապագան իրենց ծրագրերում արդեն delete՝ ջնջել են նրանց, և նոր ալգորիթմները գրել են նրանց համար այնտեղ տեղ չթողնելով: Կնշանակի մեզ հարկա-վոր է ոչ թե կենսաքայքայող ու ինքնահյուծող իշխանություն-ընդդիմություն երկփեղկող, տա-րաբաժանող ու հակամարտող քաղաքական և կառավարման ալգորիթմ ու մոդել, այլև **հայե-ցակարգային մեկամբողջ ազգային իշխանություն,** ինչպես նշել ենք երկարաժամկետ ռազմա-վարական ազգային նախագծերի կայացման գիտակցմամբ ու նպատակադրմամբ, նվիրումով ու ծառայու-թյամբ խանդավառ ու զինված: Հետևաբար, նրանք ովքեր նոր եկող աշխարհում կփորձեն ճարտապետել իրենց սեփական կենսունակ ալգորիթմներով ու մատրիցաներով, նրանք էլ իրավունք կվաստակեն կառավարելու սեփական կենսական, կենսաշահ ու կենսա-բար կենսաքաղաքականությամբ:

7/ <u>Հոգևոր-մշակութային մոբիլիզացիա</u>.

Ազգային ու պետական կյանքի բարենորոգության ու առողջացման համար անհրաժեշտ բազ-մաշերտ այս մոբիլիզացիոն գործընթացները վերջին հաշվով պետք է գտնեն իրենց հոգևոր, մշակութային արտահայտությունները, որոնք լավագույնս կարելի է դրսևորել ու կայացնել նպատակային, թիրախավորված, համակարգված ու գրագետ կազմակերպված հոգևոր-մշա-կութային մոբիլիզացիայի արդյունքում:

Պարզ է ու հասկանալի, որ պատերազմական դրության մեջ գտնվող երկրի համար, երբ դըր-ված են գոյաբանական գերհարցադրումներ, թվում է, թե մշակույթը երկրորդային է և հարկ եղած դեպքում կարող է սպասել: Սակայն, նույնիսկ, եթե երկու տարի առաջ Արցախյան 44 օրյա պա-տերազմից հետո տեղի ունենար, թեկուզև, միայն հոգևոր-մշակութային մոբիլիզացիան, վստա-հաբար այս աղետալի օրվան հասած չէինք լինի, ինչպես որ այսօր: Հետևաբար, հոգևոր-մշա-կութային մոբիլիզացիան նույնպես խիստ անհրաժեշտ է այս երեսուն և հատկապես վերջին 4 տարիների ընթացքում խորը դեգրադացված ու դեպրեսիայի մեջ գտնվող, իր հոգևոր-էներգե-տիկ փոսում հայտված հասարակությանը, որպեսզի կարողանա դուրս գալ այս համատարած և համընդհանուր տգիտության ու տհասության, բարոյալքության ու ապարժեքության հորձա-նուտից:

Սրա իրականացման համար անհրաժեշտ առաջնահերթ պահանջվող քայլերն են՝

- Խիստ վերահսկողություն մշակութային օջախներում՝ կինոթատրոն, թատրոն, համեր-գասրահներ և այլն անցկացվող, կազմակերպվող և ծրագրավորվող միջոցառումների, դրանց ցանկերի ու բովանդակությունների հետ կապված
- Հեռուստաեթերի մաքրման համար խիստ վերահսկողություն ու անզիջում սահմանա-փակումներ հեռուստաընկերություններում հեռարձարկվող հաղորդումների դրանց բովանդակության, ձևաչափերի, խոսքի մատուցման և այլ մանրուքների նկատմաբ, որոնք բացասականորեն ազդում են հասարակության՝ հատկապես երիտասարդու-թյան բարոյական, առաքինի նկարագրի, վարքագծի ու դաստիարակության վրա
- Ազգային-պետական, սոցիալ-հասարակական կյանքում հոգևորի առաջնայնության ու գերակայության գաղափարի տարածում, դրանով համակեցական կյանքը կազմակեր-պելու և կառավարելու մոդելների ու համակարգերի ձևավորում, ներդրում, տարածում և գովազդում
- Աղանդավորական բացահայտ դրսևորումների սահմանափակում
- Մշակութային կյանքում բարձրարժեք միջոցառումների կազմակերպում, գովազդում, տարածում, մշակութաբանական հաղորդումների քանակի ավելացում, ազգային ոգով կինոսցենարների, թատերգությունների պատվերների իջեցում և այլն

Անշուշտ, կառաջանա արդարացի հարցադրում. ինչպես կարելի է պետական մշակութային քաղաքականության մասշտաբայնություն ու համընդգուրկունություն ունեցող այս միջոցա-ռումներն իրագործել, **Ազգային Խորհրդի** կամ նրա մաս կազմող **Մշակութային Խորհրդի** շրջա-նակներում, առանց պետական լծակների, հովանավորության ու ռեսուրսների: Գուցե ողջ մասշտաբայնությամբ սկզբնական շրջանում կազմակերպելն անհնարին է, բայց այդ ամենի ուղղությամբ աշխատանքներ տանել, մշակությաին արժանի գործիչներին հավաքագրել, առա-ջարկներ ու առաջադրանքներ, մտքեր ու ծրագրեր գեներացնելու, ձևավորելու նպատակով հնարավոր է ու անհրաժեշտ: Առավել ևս, որ նման անհատականությունները, նրանց արժեքա-վոր գործերը կան և ստեղծվում են, ուղղակի այս անացած երեսուն տարների ընթացքում դրանք ոչ մեկին պատք չեն եղել ու արժեք չեն ստացել, հասարակական-մշակութային կյանք չեն մտել և համապատասխան ուշադրության ու գնահատականի չեն արժանացել: Իսկ նման մարդկանց հոգեմտավոր համատեղ աշխատանքի, ստեղծարար համագործակցության գենե-րացումը կունենա իր արժեէներգետիկ պայթյուններն ու արդյունքները՝ հնարավոր է նաև այ-սօր արդեն գրեթե իսպառ վերացած, <u>մտավորական մի նոր ընտրանու ձևավորմամբ</u>, որը ար-ժանիորեն կարող է տեր կանգնել <u>հոգեմտավոր իշխանությանը</u>, որն այսօր համատարած քաո-սի վիճակում է, զի գտնվում է օտարակառույց սոցցանցերի ու մեդիացանցերի, նրանց ուղղոր-դումների, վերահսկողության, ասել է թե՝ իշխանության ներքո:

Եվ վերջին հաշվով, չպետք է մոռանալ, որ **Ազգային Խորհուրդը** չի գործելու ընդդիմության կարգավիճակում, նա խնդիր ունի դառնալու **լեգալ լեգիտիմ իշխանություն՝ որպես ներկայում հակաճգնաժամային կառավարություն, կառավարման կրիտիկակկան ենթակառուցվածք, որպես սուվերեն սուբյեկտ:** Հետևաբար, սա ոչ թե իշխանափոխություն է հանուն իշխանափո-խության, և այս ինքնանպատակայնության մեջ հերթական անգամ չենք կանգնելու հին տաշ-տակի առջև, ինչպես հայտնվեցինք մի բան էլ ավելի վատթար վիճակում 2018թ-ի իշխանափո-խությունից հետո, այլև նպատակային ու գաղափարական, ծարգարային ու նախագծային ճար-տարապետումներով գնում ենք **ինքնիշխան Ազգային Պետության կառուցման՝ ազգային հայե-ցակարգային իշխանության ձևավորմամբ՝ որպես պատմական ռամավարական պատասխա-նատու սուբյեկտ:** Այնպես որ, պետական մշակութային քաղաքականություն իրականացնելուց առաջ նախ՝ **ԱԽ**-ն պետք է նախագծի Ազգային Մշակութային քաղաքականության բովանդա-կությունն ու հեռահար նպատակները, նոր հետո միայն ապահովի դրանց իրականացման մե-խանիզմների կիրառումը, դրսևորան ձևերը, իրագործման եղանակները և կյանքի կոչման ուղիները:

8/ <u>Սոցիալ-հասարակական մոբիլիզացիա</u>.

Այսքանով հանդերձ հնարավոր կլինի կազմակերպել **սոցիալ-հասարակական մոբիլիզա-ցիան,** որովհետև արդեն իրականացված կլինեն **համաժողովրդական-համապետական և հա-մազգային-մոլորակային համընդհանուր ու համապարփակ մոբիլիզացիայի** համար անհրա-ժեշտ մնացած մյուս մոբիլիզացիոն գործընթացներն ու գործիքակազմերը, որոնց կայացումն ինքնին ենթադրում ու պայմանավորված է հենց սեցիալ-հասարակական կյանքի ինքնակազ-մակերպմամբ, հատկապես.

- **Ոգեգաղափարական՝ Հոգևոր Խորհրդի առաջնորդությամբ,** քանզի վերջապես կա Ազ-գային Պետություն կառուցելու վճռական նպատակադրումը և դրա հանդեպ պարտա-վորություն ու պատասխանատվություն ստանձնած համակարգաստեղ միջուկը
- **Ռազմական-անվտանգային՝ Ռազմական Խորհրդի գլխավորությամբ,** որովհետև հո-գևոր առաջնորդությամբ ռազմական ուժ-զորությունը ստանում է ոգեղեն-գաղափարա-կան նպատակին ծառայելու և կայացնելու առաքելություն, դրա հանդեպ զինվորական երդման, ինքնանվիրումի ու անձնազոհության պատրաստակամության խոր գիտակ-ցումով, պարտականությամբ ու պատասխանատվությամբ
- **Տնտեսական՝ Տնտեսական Խորհրդի համակարգման ներքո,** որի արդյունքում կենսա-բար ու համակարգաստեղծ կենսագործունեության ու համագործակցության կվերած-վեն մեր ազգային-հասարակական համակեցությունը հանրապետական և համազգա-յին մակարդակներում

- **Քաղաքական՝ Քազաքական Խորհրդի ձևավորմամբ ու կենսագործմամբ՝ որպես մի նոր որակի ու արժեքայնության կենսաքաղաքականություն,** հակառակ այսօր առկա մակա-բուծային ու սպառված ապաքաղաքականության ու կեղծքաղաքականության, նմանա-տիպ օրակարգերի ու գոծունեության և դրանք սպասարկող գործիչների ու կառույցների
- **Հոգևոր-մշակութային՝ Հոգևոր Մշակութային Խորհրդի մշակութաստեղ ստեղծագոր-ծականությամբ,** որն ուղենշելու և ճարտարապետելու է ազգային պետության մշակու-թային արժեորակային ու արժենշանակային քաղաքականությունը և ապահովելու է դրա կայացման գործիքակազմերն ու երաշխիքները
- **Տեղեկատվական-հաղորդակցային՝ Տեղեկատվական-Հաղորդակցային Խորհրդի ակ-տիվ գործունեությամբ,** որն այս ամենի նյութական իրացում-իրագործմանը զուգընթաց, դրա ճարտարապետումը պետք է իրականացնի թվային վիրտուալ հարթակներում, որոնց արտաքնացմամբ էլ նյութական իրականությունում ամեն ինչ ավելի քան իրա-կան ու իրագործելի, կենսունակ ու ամբողջական կդառնա
- **Գիտական-տեխնոլոգիական՝ Գիտական-Տեխնոլոգիական Խորհրդի գիտատար օժան-դակությամբ,** որն աչափ ու անփոխարինելիորեն անհրաժեշտ է այս ողջ մոբիլիզացիոն գործընթացների համակարգային իրականացման համար, հատկապես դրանցից մի քանիսում իր կարևոր և նշանակալի մասնակցությամբ ու որոշիչ դերակատարմամբ՝ հատկապես, **ՌՄ**-ում մասնակցելով ռազմական-ինքնապաշտպանական միջոցառում-ներին գիտահենք նորարարություններով օգտակար մասնակցությունից սկսած մինչև այդքան թմբկահարված ռազմարդյունաբերություն, **ՏՀՄ**-ում անհրաժեշտ գիտատեխ-նիկական աջակցությամբ ու գործիքների ստեղծմամբ ու կիրառմամբ, **ՏՄ**-ում նորարա-րական-գյուտարարական հայտնագործությունների ու առկա տեխնոլոգիաների միջո-ցով ապահովելու տնտեսական աճի հնարավոր ու իրական առաջընթաց և այլն: Եվ այս ամենը պետք է մեկնարկել այս բնագավառում նորարարությունների ու գյուտերի հա-վաքագրմամբ ու հաշվառմամբ, համակարգմամբ ու գույքագրմամբ, դրանց նպատակա-յին առաջնայնության և իրականացման հավանականության իրագործմամբ և կենսա-գործմամբ: Իսկ այս ռեեստրը պետք է ներգրավի հայության ազգային ողջ գիտական-մտավոր պոտենցիալը՝ ստեղծելով հնարավորություն հայկական գիտական մտքի նոր ստեղծարար պայթյունի ու նոր որակի ազգային ակադեմիայի վերաձևավորման կամ համալրման համար
- **Գիտական-կրթական՝ Գիտական-Կրթական Խորհրդի անհրաժեշտ ու անհետաձգելի օժանդակությամբ՝** ազգային էական ու ինքնութենական սերնդի համար գիտակրթա-դաստիարակչալուսավորչական ապագայամետ

հիմնարարա բազայի ստեղծման նը-պատակադրման ու կայացման միջոցով, և սա էլ դրաձյալ համաժողովրդական-հան-րապետական և համազգային-համաշխարհային երկմակարդակ հարթություրններում

- **Կառավարման՝ Կառավարման Խորհուրդի համակարգման ու կոորդինացման արդյու-նավետությամբ՝** ապահովելով վերը թվարկվածների միասնամբողջ համակարգային օ-պերատիվ ու օպտիմալ, համագործակցությամբ ու փոխլրացմամբ, անխափան ու շա-րունակական աշխատանքը։
- **Դիվանագիտական՝ Դիվանագիտական Խորհրդի ակտիվ մասնակցությամբ՝ համատե-ղելով ներհայաստանյան և արտերկրներում առկա հայկական քաղաքական-դիվա-նագիտական ռոջ ներուժը**
- **Իրավագիտական՝ Իրավագիտական Խորհրդի ղեկավարությամբ՝ համակարգելով հա-յաստանյան, սփյուռքյան և շահագրգիռ օտարերկրյա իրավապաշտպան կառույցների հետ համատեղ իրավագիտական նախահարձակ գործողությունների ու աշխատանք-ների իրականացում միջազգային տարբեր հարթակներում։**

  Այս երկու խորհուրդների՝ **ԴԽ** և **ԻԽ** կողմից համապատասխան դիվանագիտական ու իրավաբանական աշխատանքների մոբիլիզացիան բացառիկ անհրաժեշտություն է միջազգային ատյաններում հայկական պետական ու ազգային շահը համակարգված ու նպատակային, թիրախավորված ու գրագետ, արհեստավարժ ու արդյունավետ հա-մակարգելու, ներկայացնելու և շահեկան արդյունքներ ստանալու նպատակով
- **Սոցիալ-Հասարակական՝ Հանրային-Ժողովրդական Խորհդրի մասնակցությամբ,** որը սոսնձելու է տարաբաժանված, բզկտված, խեղված, բացիլավորված ու սոցիալ-քաղա-քական վիրուսներով վարակված հասարակության բարոյա-հոգեբանական, մտավոր-գիտակցական, հուզական-զգացմունքային, առօրյա-վարքագծային կեցությունը՝ համե-ռաշխ ու համագործակցության, փոխօգնության ու փոխվստահության մթնոլորտի, գոր-ծակցային միջավայրի ձևավորման ու հասարակական համերաշխության վերականգ-նման ու առողջացման միջոցով
- **Համընդհանուր և համապարփակ, համապետական ու համազգային՝ Ազգային Խոր-հրդի առաջնորդությամբ՝** որպես այս ամենով ու այս բոլորի հավաքական ու համա-կարգային, նպատակային ու **ազգային կառավարման կրիտիկական ենթակառուցվածք, որպես ճգնաժամային կառավարություն, ազգային հայեցակարգային իշխանություն, ռազմավարական պատմական սուվերեն սուբյեկտ և դրա գերագույն գլխավոր հրամա-նատարությամբ,** երկիրը դուրս կբերվի այս օրհասական վիճակից և կուղղորդվի դեպի **Ազգային Պետության** վերակերտման ճանապարհով՝ դրա համար անհրաժեշտ ազգա-յին նոր ու արդիականացած կառավարման համակարգերի ստեղծման, նոր ու

արդիա-կան տնտեսական մոդելի կիրառման և արժեքային մի նոր որակի կենսաքաղաքակա-նության ռազմավարությամբ ու դրանց կայացմամբ

Նկարագրված մոբիլիզացիոն գործընթացները հիմնականում վերաբերում են **համաժողովր-դական-համապետական մոբիլիզացիային,** իսկ **համազգային մոբիլիզացիան,** որի առանձին որոշ դետալների մասին նշվեց հատկապես ռազմական և տնտեսական մոբիլիզացիայի բա-ժիններում, ավելի համընդգրկուն և հանգամանալից կշարադրվի ու կներկայացվի՝ որպես այս ամենի տրամաբանական շարունակություն, համակարգում և հայեցակարգային ամբողջացում այս ճանապարհային քայլերի իրացման հետագա ընթացքում, երբ կսկսվի **Ազգային Խորհրդի** ձևավորման գործընթացները, որին կմասնակցեն նաև ձևավորվող խորհուրդները՝ ներկայաց-նելով յուրաքանչյուրն իր ոլորտի ռազմավարական հայեցակարգերն ու փաթեթները։

Ամփոփելով ու ամբողջացնելով կարելի է ընդհանրացնել, որ ձևավորվող **Ազգային Խորհուրդը** ներառում է առնվազն **տասներկու խորհուրդներ**, որոնցից յուրաքանչյուրը պատասխա-նատվություն է վերցնում կոորդինացնելու և համակարգելու, կազմակերպելու և իրականացնելու համապատասխանաբար **տասներկու ոլորտային մոբիլիզացիոն աշխատանքներ։** Իսկ **Ազգային Խորհուրդը՝** որպես սրանցով ամբողջացող **հոգևոր-ռազմական-քաղաքական խոր-հուրդ, կառավարման համակարգ,** որպես **հակաճգնաժամային կառավարություն,** որպես ՀՀ-ից **Հայոց ազգային պետության** անցում կատարելու նպատակադրված **ազգային հայեցակար-գային իշխանություն,** որպես **Ռազմավարական պատմական ինքնիշխան սուբյեկտ** հանձն է առնում ստանձնել պատասխանատվություն կազմակերպելու և իրականացնելու այս տասներկու ոլորտային մոբիլիզացիոն աշխատանքները՝ որպես **համապետական ու համազգային համընդհանուր և համապարփակ մոբիլիզացիա՝ մեր երկիրն ու պետականությունը այս պատ-մական ծանր ու բախտորոշ իրավիճակից դուրս հանելու և առաջնորդելու դեպ առավել ապա-հով ու անվտանգ, արդիականացած ու կատարելագործվող, արդար ու ներդաշնակ ազգային պետության հանգրվան։**

Ազգային Խորհրդի և Մոբիլիզացիայի ընդհանուր պատկերը սխեմատիկորեն ներկայացված է հետևյալ տեսքով։